(«Արարատ»ի դեկտմ. ամսատետրի յաւելուած)

ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ

Լրումն աչխարհի և ճատադայթ իմանալի Հոգի Սուրբ Աստուծոյ, ի ցնծութեան աւուր լրման ուրախութեան Յովակիմայ և Անայի աղօթիւք սոցա լցո զպէտս կարեաց Հայաստանեայց եկեղեցւոյ. զի օրհնեսցուք զքեզ. Տէր, այժմ և յաւիտեան Շարական.

1910 թ. դեկտեմբեր 11—1911 թ. դեկտմ. 11—13.

Միաբան Ս. Էջմիածնի Յուսիկ Արքեպս.

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
Ելէքտրաշարժ Տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի
1911

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐԵԼ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐ

Ս. Էջմիածնի Մայր Տաճարում Համազգային ժողովը կազմուաց 80 հոգևորական և աշխարհական պատգամաւորներից 89 ձայների իրաւունքով 1911 թուի դեկտեմբերի 13-ին ընտրեց գաղտնի քուէարկութեամբ ամենայն Հայոց կաթուղիկոսութեան թեկնածուներ.

1. Կաթուղիկոսական Տեղակալ

Տ. ԳԷՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԱՒՐԷՆԵԱՆՑԻՆ

եւ

2. Կ. Պոլսոյ նախկին պատրիարք

Տ. ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԴՈՒՐԵԱՆԻՆ.

Ընտրութեան հետևանքը Համազգային ժողովը լսեց բուռն ոգևորութեամբ և ուրախական սրտագին բացականչութեամբ։

16 դեկտեմբ. 1911

Էջմիածին.

Պատրիարք Կաթուղիկոսի Տեղակալ Գէորգ արքեպիսկոպոս Սուրէնեանցին

ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԻՒՆԻՑ այսօր ստացայ հետեւեալ հեռագիրը.

«Յանձնարարում եմ Ձեզ, Գրաֆ, յայտնել ամենայն Հայոց Կաթուղիկոսի Տեղակալ Գէորգ արքեպիսկոպոսին և հայ եկեղեցու բոլոր ներկայացուցիչներին, որոնք ժողովուած են Էջմիածնում իմ սրտագին շնորհակալութիւնը մաղթանքների և ինձ արտայայտած զգացմունքների համար»։

Վերոյիշեալը ծանուցանում եմ Ձերդ Բարձր Սրբազնութեանը յայտնելու որոց անկ է։

Գենեռալ Ադիւտանտ Գրաֆ Վորոնցով-Դաշկով.

Այս պատասխանն է Ս. Էջմածնի Կաթուղիկոսական ընտրութեան Համազգային ժողովի հետեւեալ հեռագրի.

13 դեկտեմ.

Թիֆլիս.

ՆՈՐԻՆ ՊԱՅԾԱՌԱՓԱՅԼՈՒԹԵԱՆ ԿՈՎԿԱՍԵԱՆ ՓՈԽԱՐՔԱՅ ԳՐԱՖ ՎՈՐՈՆՑՈՎ—ԴԱՇԿՈՎԻՆ.

ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ԹԱԳԱՒՈՐ ԿԱՅՍՐԻ ԿԱՄՔՈՎ

Էջմիածնում խմբուած պատգամաւորների ժողովը, որ բաղկացած է Ռուսաստանի, Տաճկաստանի, Պարսկաստանի, Արևմտեան Եւրոպայի և Ամերիկայի Հայ Լուսաւորչական հօտի Ներկայացուցիչներից, աւարտելով ամենայն Հայոց ծայրագոյն Պատրիարք Կաթուղիկոսի գահի համար երկու արժանաւորագոյն թեկնածուների ընտրութեան վեհ գործը, ոգևորուած է անկեղծ սիրով դէպի Ս. Գրիգոր Լուսաւորչի աթոռի ՎԵՀԱԳՈՅՆ ՀՈՎԱՆԱՒՈՐԸ, (աթոռի) որ գտնուում է ռուսաց սահմանում, և վերաբերելով ջերմ աղօթքներ ՆՈՐԻՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ և Աստուածային Տան թանկագին կեանքի համար յարգոյաբար խնդ-

բում է Ձերդ պայծառափայլութիւնից Նորին Կայսերական Մեծութեան ոտների տակ սփռել Նրա հաւատարիմ հպատակների անկեղծ հաւատարմութեան զգացմունքները և բոլոր պատգամաւորների կողմից ջերմ երախտագիտութեան արտայայտութիւնը՝ դէպի հայ ազգն ու եկեղեցին ցոյց տուած անդրդուելի հովանաւորութեան համար, այլ և յայտնել Նորին Կայսերական մեծութեան ու բոլոր Արքայական տան առողջութեան ու երկարակեցութեան համար ջերմ բարեմաղթութիւններ։

Համազգային ժողովը Կովկասի Տ. Փոխարքային դեկտ. 13-ին ուղղեց հետեւեալ հեռագիրը։

ԹԻՖԼԻԶ

Նորին Պայծառափայլութեան Կովկասի Փոխարքայ Գրաֆ Վորոնցով-Դաշկովին։

Պատգամաւորական ժողովը, որ խմբուած է Էջմիածնում Ծայրագոյն պատրիարք կաթուղիկոսի ընտրութեան համար և բաղկացած է 89 պատգամաւորներից, որոնք ժողովուել են Ռուսաստանի, Տաճկաստանի, Պարսկաստանի, Եւրոպայի և Ամերիկայի զանազան տեղերից, այսօր աւարտելով Ս. Գրիգոր Լուսաւորչի Գահի երկու արժանաւորագոյն թեկնածուների—Գէորգ Սուրէնեան և Եղիշէ Դուրեան արքեպիսկոպոսների ընտրութիւնը, մատուցանում է Ձերդ Պայծառափայլութեան խորին շնորհակալութիւն առ հայ եկեղեցին և ազգը Ձեր ուշադրութեան և բարեացակամութեան համար, և վեր է առաքում առ Ամենաբարձրեալն ջերմ աղօթքներ Ձեր թանկագին կեանքի երկարատեւութեան համար։

Որին Նորին Պայծառափայլութիւնը պատասխանեց

Խորին շնորհակալութիւնս եմ յայտնում պատգամաւորական ժողովի անդամներին նրանց արտայայտած զգացմունքի համար. շարունակ մեծ ուշադրութեամբ և անկեղծ համակրութեամբ կը վերաբերուեմ բարձրագոյն մեր խնամքին յանձնուած Կովկասեան հայերի բարի ձեռնարկութիւններին»

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

Վեհ. Տ. Մատթէոս Բ. կաթուղիկոսը 1910 թ. դեկտեմբերի 11-ին առաւօտեան հանդեաւ ի Տէր։ Սինոդը օրինական և սովորական գործողութիւնները կատարեց. և իւր աւագագոյն անդամ Տ. Գէորգ արքեպիսկոպոսին հրատարակեց Սինոդի նախագահող և ամենայն Հայոց Հայրապետի տեղեկալ։ Հանգուցեալ Հայրապետի թաղումը կատարուեց նոյն դեկտեմբերի 19-ին մեծ հանդիսով, բազմաթիւ պաշտօնական ներկայացուցիչների և հասարակութիւնների ու հաստատութիւնների պատգամաւորների ներկայութեամբ (Արարատ 1910 թ. դեկտ.)։

(Գործ Սինոդի սկսուած 1910 թ. դեկտ. 31. № 161.)

Նոր հայրապետի ընտրութեան ժամանակի սահմանումն եւ ծանուցողական հրովարտակ.

Նոր Հայրապետի ընտրութիւնը օրէնքով պէտք է կատարուէր 1911 թ. դեկտեմբերի 11-ից ոչ առաջ (օրէնք. հատ. XI. I. յօդ. 1119)։ Սինոդը ի նկատի ունենալով, ա. որ Հայրապետի ընտրութեան յապաղելը կը յապաղեցնի և ս. միւռոնի օրհնութիւնը, որ պէտք է կատարուէր դեռ 1910 թուի սեպտեմբերի 12-ին, բայց խոլերայի պատճառով յետաձգուեց, իսկ վերջին մեռոն օրհնութիւնը կատարուել էր 1903 թ. և ս. միւռոնը կարող էր պակասել. բ. որ դեկտեմբերի 11-ը լինելով ձմեռնային ժամանակ՝ որոշ դժուարութիւններ կը յարուցանի հեռաւոր տեղերի—Տաճկաստանի և Պարսկաստանի պատգամաւորների ճանապարհորդութեան և թէ Մայր Աթոռում տեղաւորեցնելու վերաբերութեամբ, 1910 թուի դեկտ. 31-ին № 3085 թղթով խնդրեց Կովկասու Տ. Փոխարքային միջնորդել Նորին Կայսերական Մեծութեան Թագաւոր կայսեր առաջ, արտօնելու, որ Նոր Հայրապետի ընտրութիւնը վաղ, այն է, 1911 թուի սեպտեմբերի 1-ին կատարուի։

Սինոդի այս դիմումին Տ. Փոխարքան, 1911 թուի փետր. 4-ին № 2386, պատասխանեց, որ ինկատի ունենալով կաթուղիկոսի ընտրութեան համար օրէնքով սահմանուած տարեւոր ժամանակամիջոցը, Սինոդի առաջ բերած պատճառներով հնարաւոր չի գտնում կաթուղիկոսի ընտրութեան ժամանակը կրճատելու համար միջնորդել։

Սինոդը Տ. Փոխարքայի այս թղթից յետոյ 1911 թ. փետրվարի 16-ին օրագրով որոշում է առաջին, ամենայն Հայոց նոր հայրապետի ընտրութիւնը նշանակել այս 1911 թուի դեկտեմբերի 11-ին. երկրորդ, կազմելով այս մասին սահմանուած ձևով ծանուցողական հրովարտակներ ուղարկել Ս. Երուսաղէմի և Կ. Պոլսոյ Հայոց պատրիարքներին, Կ. Պոլսոյ աղդ. ժողովին, Տանն Կիլիկոյ Սրբազան կաթուղիկոսին, Աղթամարայ կաթուղիկոսական տեղապահին, Ռուսաստանի, Տաճկաստանի և Պարսկաստանի Հայոց թեմերի առաջնորդներին. երրորդ Ռուսաստանի թեմական առաջնորդներին ուղարկել ուղղակի, իսկ արտասահմանեցիներին ուղարկել Կովկասի Փոխարքայի դիւանատունը, խնդրելով կարգադրել հասցնել ըստ պատկանելոյն. և չորրորդ, նոր կաթուղիկոսի ընտրութեան նշանակուած օրուայ մասին յայտնել Կովկասի Տ. Փոխարքային (Արարատ Մարտ 1911 թ. եր. 183—186)։

Պատրաստուած ծանուցողական հրովարտակները նոյն փետրվարի 23-ին թ. 427 գրութեամբ, արտասահմանեան թեմերի ցուցակի հետ, Սինոդը ուղարկում է Տ. Փոխարքայի դիւանատունը։ Այդ ցուցակով Տաճկաստան՝ պատրիարքներին, Սսոյ և Աղթամարայ կաթուղիկոսական տեղերին և առաջնորդներին ուղարկուում է ծանուցողական հրովարտակ՝ հայ թեմերի թիւը հաշուելով 47։ Ատրպատականի և Հնդկա-Պարսկաստանի առաջնորդներին՝ 2 հատ։ Այս մասին նոյն փետր. 25 տեղեկութիւն է տրուում Կ. Պոլսոյ պատրիարքարանին՝ ուղարկելով Տաճկաստանի հայ թեմերի ցուցակը, Երուսաղէմի պատրիարքարանին, և Ատրպատականի ու Պարսկա-Հնդկաստանի Հայոց առաջնորդներին։

Աշխարհական շրջանային պատուիրակների եւ թեմական պատգամաւորի ընտրութիւն:

Աշխարհական շրջանային պատուիրակների և թեմական պատգամաւորների ընտրութեան համար Սինոդը ուղարկում է առաջնորդներին Կովկասի Փոխարքայի հեռաւոր շրջաբերականը։

Շրջաբերական

Անդրկովկասի Նահանգապետներին եւ Հայ-Լուսաւորչականեկեղեցու թեմական Առաջնորդներին.

ԱՇԽԱՐՀԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՒՈՐՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ

ԿԱՆՈՆՆԵՐ

1. Անդրկովկասի իւրաքանչիւր հայ թեմական առաջնորդ, ամենայն Հայոց կաթողիկոսի առաջիկայ ընտրութեան մասին Ս. Էջմիածնի Սինոդից ծանուցում ստանալուց յետոյ, տեղեկութիւն է տալիս այդ մասին իւր թեմի նահանգապետին՝ պատշաճաւոր կարգադրութիւն անելու իւր թեմից մի աշխարհական պատգամաւոր ընտրելու համար, որ պիտի մասնակցէ ամենայն Հայոց կաթողիկոսի ընտրութեան։

2. Թեմական առաջնորդը իւր ծանուցագրի մէջ հիմնուելով թեմի բաժանման վրայ, որ նշանակուած է Հայ-Լուսաւորչական եկեղեցու հոգևոր գործոց կառավարութեան վերաբերեալ կարգադրութեան մէջ (հատ. XI մ. I, գլ. չորրդ, յօդ. 962, 963, 964 և 995), ցոյց է տալիս այն գաւառներն ու գաւառամասերը (ուեղդ և ուչաստօկ), ուր հոգևոր կառավարութիւններ ու գործակալութիւններ են սահմանուած և ուր Հայաստանեայց եկեղեցու անդամները, որոնք այս եկեղեցու վաղեմի սովորութեան համեմատ իրաւունք ունին աշխարհական պատգամաւորի ընտրութեան մասնակցելու, պարտաւոր են ընտրել իրենց միջից ներկայացուցիչներ։

3. Թեմական առաջնորդից այնպիսի ծանուցագիր ստանալուց յետոյ նահանգապետը գաւառապետների ձեռքով պատշաճա-

ւոր կարգադրութիւններ է անում յայտարարելու հոգևոր կառավարութեան կամ անմիջապէս թեմից կախումն ունեցող գործակալութեանց ստորագրեալ վայրերի Հայ-Լուսաւորչական բնակիչներին, որ նոքա մինչև որոշեալ ժամանակ ընտրեն երկ-երկու ներկայացուցիչ, որոնք յիշեալ ժամանակին պիտի գնան այն թեմի գլխաւոր քաղաքը, որին իրենք պատկանում են, և այն քաղաքի ներկայացուցիչների հետ միասին ընտրեն թեմիցը մի պատգամաւոր։

Ծանօթութիւն. Թէպէտ Քութայիսի գործակալութիւնն անմիջապէս թեմական իշխանութեանը չէ ստորագրուած, բայց որովհետև Իմերեթի և Գուրիայի Հայ-Լուսաւորչական եկեղեցիները Վրաստանի թեմի մի մասն են կազմում, ուստի Քութայիսի գործակալութիւնից ևս երկու ներկայացուցիչ է ընտրուում։

4. Ներկայացուցիչ կարող են կարգուել թէ տեղացի ընտրողներից և թէ առաջնորդանիստ քաղաքի բնակիչներից, որոնք ընտրութիւններին մասնակցելու իրաւունք ունին։ Տեղացի բնակիչներից ընտրուած ներկայացուցիչները իրենց ձայնը կարող են հաւատարմագրով ուրիշին յանձնել, եթէ չեն կարող առաջնորդանիստ քաղաքը գնալ։

5. Թեմի գլխաւոր քաղաքի ներկայացուցիչներ ընտրելու համար ամեն մի թեմական առաջնորդ, նահանգապետի համաձայնութեամբ, առաջնորդանիստ քաղաքի բոլոր եկեղեցիների աւագերէցներին առաջադրում է, որ նոքա եկեղեցիներում առաջիկայ կիրակի օրը յայտարարելով՝ հրաւիրեն Հայաստանեայց եկեղեցու վաղեմի սովորութեան համեմատ աշխարհական պատգամաւորի ընտրութեան մասնակցելու իրաւունք ունեցողներին՝ ներկայացուցիչներ ընտրելու իրենց միջից պատգամաւոր ընտրելու համար, որ պիտի մասնակցէ ամենայն Հայոց կաթողիկոսի ընտրութեանը։

Այդ ներկայացուցիչներից ընտրութիւնը կատարուում է հետևեալ եղանակով.

ա) Ամէն եկեղեցում այն անձինք, որ Հայաստանեայց եկեղեցու վաղեմի սովորութեամբ իրաւունք ունին պատգամաւորի ընտրութեան մասնակցելու, ընտրում են իրանց միջից երեք-երեք ներկայացուցիչ։

բ) Ներկայացուցիչների ընտրութիւնը պիտի կատարուի կամ եկեղեցու մէջ, ժամասացութիւն չեղած ժամանակ, կամ եկե-

ղեցու բակումը։ Ընտրութիւնը պիտի աւարտուի յայտարարութիւնից յետոյ ութ օրուայ ընթացքում։

գ) Ներկայացուցիչների ընտրութիւնից յետոյ կազմուում է ընտրողական թերթ, որի մէջ պիտի նշանակուի ընտրուած ներկայացուցիչների անուններն ու ազգանուններն և ընտրողների ստորագրութիւնները.

դ) Ներկայացուցիչների ընտրութիւնն աւարտուելուց յետոյ աւագերէցները ընտրողական թերթերը մատուցանում են իրենց թեմական առաջնորդներին, որոնք իրենց կողմից այդ թերթերն ուղարկում են նահանգապետներին, իսկ եթէ նահանգապետ չկայ, գաւառապետներին։

6. Նահանգապետի կամ գաւառապետի նախընթաց համաձայնութեամբ նշանակուում է ներկայացուցիչների ժողովի ժամանակն ու տեղը առաջնորդանիստ քաղաքում։

7. Որոշուած ժամանակին բոլոր ընտրուած ներկայացուցիչները գումարուում են նշանակուած տեղում թեմի կողմից պատգամաւոր ընտրելու համար։ Ժողովը կանոնաւոր է համարուում, եթէ ներկայ լինին ներկայացուցիչների երկու երրորդական մասը, հաշուելով այդ թուում և հաւատարմութիւնք ունեցողներին։

8. Ներկայացուցիչները պատգամաւորի թեկնածուներ են առաջարկում քուէարկութեամբ, միայն քուէարկուողների համաձայնութեամբ։

9. Քուէարկութիւններն աւարտուելուց յետոյ ամենաշատ քուէ ստացողը կարգուում է այն թեմի պատգամաւոր, որտեղ կատարուել է ընտրութիւնը. Նրանից յետոյ աւելի ձայն ստացողը կարգուում է կանդիդատ՝ պատգամաւորի մահուան կամ հիւանդութեան դէպքում նրան փոխարինելու համար։

10. Պատգամաւոր ընտրելու ժամանակ ներկայացուցիչների ժողովում կարգ պահպանելու համար ներկայ է լինում իշխանութեան կողմից նշանակուած մի պաշտօնեայ։

11. Բոլոր թեմերից ընտրուած աշխարհական պատգամաւորները նշանակուած ժամանակին պիտի գնան Ս. Էջմիածնի վանքը՝ ամենայն Հայոց Պատրիարք—Կաթողիկոսի ընտրութեանը մասնակցելու համար։

12. Այս պատգամաւորները, եթէ կաթողիկոսի ընտրութեան համար նշանակուած ժամանակին չկարողանան գնալ Ս. Էջմիածնի վանքը, օրէնքով իրաւունք ունին գրով յայտնելու իրենց կարծիքները, ուղարկելով այն Ս. Էջմիածնի վանքը։

Սուրբազրել է. Փոխարքայ Կովկասի
գեներալ Ֆելդցէյխմէյստեր ՄԻԼՅԱՆՈՎ.

Վաւերացրել է. Գլխաւոր Կառավարութեան Պետ,
Սենատոր, Ստաս-Սեկրետար Բարոն
Ա. ՆԻԿՈԼԱՅԻ.

Համեմատ է բնագրին. Ատենադպիր Սինոդի Ս. Էջմիածնի
Յ. Յովհաննիսեան.

Այս շրջաբերականի համեմատ կատարուել է շրջանային պատուիրակների և թեմական պատգամաւորների ընտրութիւնը Ռուսաստանում։

Եւրոպայի եւ Ամերիկայի հայ թեմերի մասնակցութիւնը կաթուղիկոսական ընտրութիւններին.

Հանգուցեալ Մկրտիչ Ա. կաթուղիկոսը ի նկատի ունենալով հայերի բազմանալը Արևմ. Եւրոպայում և Ամերիկայում Թուրքաց հարստահարութեան երեսից խուսափող դաղթականներով, Արևմ. Եւրոպայում և Ամերիկայում մի մի թեմ հաստատեց և առաջնորդներ էր կարգեց։ Հայրապետի մահից յետոյ Սինոդը 1907 թուին դեկտեմբերի 7-ին դիմել էր Կովկասի Տ. Փոխարքային յայտնելով թէ արդեօք չկայ արդեօք նրա կողմից Հայրապետի մահը ծանուցանող և նորի ընտրութեանը մասնակցելու հրաւիրող հրովարտակ ուղարկել Արևմտեան Եւրոպայի և Ամերիկայի հայ թեմերին։

Ներքին Գործերի Նախարարութիւնը 1908 թուի յունվարի 20-ին № 7595 գրութեամբ մանրամասն տեղեկութիւններ է հաղորդում այդ թեմերի մասին։ Իսկ Սինոդը պատասխանում է նոյն տարուայ փետր. 15-ին, յայտնելով՝ թէ Եւրոպայի թեմը կազմուել է 1898 թ. և ունի 10,000 ծխական. առաջնորդական աթոռն է Մանչեստրում հայ եկեղեցու մօտ։

Ամերիկայի թեմը նոյնպէս կազմուել է 1898 թ., ունի մօտ 40,000 ծխական. առաջնորդական աթոռն է Ուստրում, Ս. Փրկիչ եկեղեցու մօտ։

Սինոդը պատասխանի յամեցումն տեսնելով վերատին դիմում է Նախարարութեան 1908 թ. մայիսի 23-ին №. 1338, և հեռագրով՝ նոյն թուի սեպտեմբերի 22-ին և Օտար դաւանութեանց Դեպարտամենտից նոյն սեպտեմբերի 24-ին ստանում է հետևեալ պատասխանը.

«Արևմտեան Եւրոպայի և Ամերիկայի թեմերը ճանաչելու խնդիրը վճռուած չլինելով, որի մասին գրագրութիւնը շարունակւում է, ծանուցողական թղթեր նրանց չեն ուղարկուիր։

Այսպիսով կաթուղիկոսական ընտրութեան չեն մասնակցում Արևմտեան Եւրոպայի ու Ամերիկայի Հայ թեմերը (Արարատ. 1908 թ. նոյեմբ. եր. 974-6)։

Ամերիկայի Ազգային Կենտրոնական վարչութիւնը 1911 թուի յուլիսի 10-ին Ն. տ. դիմել էր Կաթուղիկոսական Տեղակալ Տ. Գէորգ արքեպիսկոպոսին միջնորդել Ռուս կառավարութեան առաջ, որ Ամերիկայի հայ թեմն էլ կաթուղիկոսական ընտրութեանը մասնակցութիւն ունենայ, յայտնելով որ դիմել են և Ամերիկայում եղած Ռուսաց դեսպանին։ Տեղակալ Տէր Գէորգ արքեպիսկոպոսի մակագրութեամբ Սինոդը ստանալով Ամերիկայի Հայոց Ազգ. Կենտրոնական վարչութեան գրութիւնը, նոյն յուլիսի 29-ին № 1868 դիմեց Կովկասի Տ. Փոխարքային խնդրելով միջնորդել Ռուս Կայսերական կառավարութեան առաջ որ Եւրոպայի և Ամերիկայի հայ թեմերին էլ, որոնք անմիջապէս ենթարկւում են Էջմիածնի ամենայն Հայոց Հայրապետին, իրաւունք տրուի իրանց հոգևորական և աշխարհական պատգամաւորների միջոցով մասնակցել կաթուղիկոսական ընտրութեանը։

Սեպտեմբերի 20-ին կաթուղիկոսական Տեղակալ Տ. Գէորգ արքեպիսկոպոսը ստացաւ Ներքին Գործոց Նախարարութեան այլազգաւոր դեպարտամենտի դիրեկտոր Խարուզինից հետևեալ հեռագիրը.

«Փոխարքային յայտնուած է, որ արգելք չկայ Արևմտեան Եւրոպայի և Ամերիկայի Հայ թեմերին Մայրագոյն Պատրիարք կաթուղիկոսի ընտրութեանը մասնակցելու։ Բարեհաճեցէք ուղարկել ծանուցողական հրովարտակները Փոխարքայի ձեռքով»։ Այս տեղեկութիւնը հաղորդում է և Փոխարքայի դիւանատունը նոյն սեպտեմբերի 27–ին։

Ըստ այսմ Սինոդը սեպտեմբերի 23–ին, օրագրով որոշում է.

«Ուղարկելով Եւրոպայի և Ամերիկայի հայոց առաջնորդների անունով ծանուցողական հրովարտակներ ի Տէր հանգուցեալ Մատթէոս Բ. կաթուղիկոսի մահուան մասին և ընտրական կանոններից մի մի օրինակ, հրաւիրել նոցա մասնակցելու, օրէնքի համաձայն, առաջիկայ կաթուղիկոսական ընտրութեան և ընտրել տալու նոյն նպատակով մի մի աշխարհական պատգամաւոր ամէն մի թեմից։ Յիշեալ հրովարտակներն ուղարկել Կովկասի Տ. Փոխարքայի ձեռքով, համաձայն Հոգևոր Գործոց Դեպարտամենտի վերատեսչի հեռագրի»։

Այս մասին առանձին № № 2278 և 2279 գրութիւններով նոյն սեպտեմբերի 27–ին յայտնուեց Եւրոպայի և Ամերիկայի առաջնորդներին։

Ներքին Գործ. Նախարարի նոր ցուցումն կաթուղիկոսական ընտրութիւնների կարգերի վերաբերութեամբ.

Ներքին Գործերի Նախարարութիւնը հոկտեմբերի 7-ին № 9005, Սինոդի պրոկուրորի հարցերին պատասխանելով կաթուղիկոսական ընտրութեան առիթով առաջադրում է.

1. Յիշեալ նպատակով Էջմիածնին հկած պատգամաւորների լիազօրութիւնների վերստուգութիւնը կարող է կատարել ընտրական ժողովը, բայց տարակուսութեան դէպքում երաւունք վերապահելով ըողոքելու Էջմիածնի հայ լուսաւորչական Սինոդին, որի վճիռները այս կարգի գործերի համար պէտք է համարուեն վախճանական։

2. Որովհետև թեմերի ժամանակաւոր կառավարիչները անտարակոյս Այլադաւանների Օրինաց Հաւաքածոյի 1120 յօդուածի համեմատ նոյն թեմերի առաջնորդներն են հանդիսանում քանի որ եպիսկոպոսական այդ աթոռները բռնուած չեն վերջնականապէս արքեպիսկոպոսական աստիճան ունեցող անձինքներով, (Այլադ. Օր. Հաւաք. յօդ. 1169 և շար.), ուրեմն յիշեալ 1120 յօդ. համեմատ՝ անվիճելի կերպով թեմ. ժամանակաւոր կառավարիչներին է մնում իրաւունքը այս նպատակով ուղարկելու ընտրութեանը իրանց նշանակած հոգևոր պատգամաւորներին:

2. Թեմական առաջնորդները կարող են կաթուղիկոսի ընտրութեան համար իրանց կողմից առանձին լիազօրների փոխանակ գրաւոր կարծիք ուղարկել իրանց ընտրելի թեկնածուների մասին. թեմական առաջնորդների այս իրաւունքի համար արդէն ցուցմունք կայ Նախարարութեանը ուղարկած ընտրական հրամարտակների մէջ:

4. Պատգամաւորները չեն կարող ճնշուել յօդուտ իրանց թեմական առաջնորդի ձայն տալիս, որովհետև նրանց իրաւունքը այս դէպքում չէ սահմանափակուած ոչ օրէնքով և ոչ կաթուղիկոսական ընտրութեան 1843 թուի կանոններով:

5. Ի դէպս, եթէ Սինոդի անդամների թիւը պակաս լինի, թուի լրացնելը ամբողջովին կախուած է Կաթուղիկոսական Տեղակալի համապատասխան առաջարկութիւնից (Այլադ. Օր. Հաւաք. յօդ. 1140): Անկասկած, ընտրութիւններին կը մասնակցեն միայն արդի 7 անդամները:

6. Ընտրութեան ներկայ եղող պատգամաւորները չեն կարող հրաժարուել ձայն տալուց թէ չորս աւագ թեկնածուների և թէ այդ յիշուած չորսից երկու ընտրելիների քուէարկութեան ժամանակ, ի նկատի ունենալով 1843 թուի ընտրութեան կանոնների § 19 որոշ ցուցումը, որի զօրութեամբ ազատուում են ձայն տալուց միայն այն պատգամաւորները, որոնք ծանր հիւանդութեան պատճառով բոլորովին անկարող են յայտնել իրանց կարծիքը:

7. Կաթուղիկոսական ընտրութեան մասնակցող, թէ իսկապէս ընտրական իրաւունքով կոչուած և թէ թեմական առաջնորդներից նշանակուած (Այլադ. Օր. Հաւաք յօդ. յօդ. 1120) պատգամաւորները կարող են ունենալ միայն իրանց մի ձայնը. Մի քանի առաջնորդների միայն մի հոգևորական անձին յանձնարարելը զանազան թեմերի կողմից ներկայացուցիչ հանդիսանալ, չի կարող օրինական ոյժ ունենալ. որովհետև նոյն հոգևոր անձը ենթարկուած չլինելով ըստ օրինի

թեմերի առաջնորդներին, որոնց բաղկացութեան մէջ-ինքն չի գտնուում, կարող է միայն իւր թեմական առաջնորդի շահերի ներկայացուցիչը լինել, առաջնորդի, որ Այլադ. Օր. Հաւաք. 1120 յօդուածի խոկական մաքին համեմատ ուղարկում է նրան Էջմիածին, վերև յիշուած նպատակի համար, որպէս ներկայացուցիչ։ Նոյնպէս և աշխարհիկ պատգամաւորները, որոնք ընտրուած են որոշ թեմերի ծուխերից, չեն կարող ներկայացուցիչ լինել այն թեմերի, որի մէջ նրանք չեն համարուում։

Վերջապէս 8. Զորս աւագ թեկնածուներից քուէարկուող թեկնածուն կարող է մնացած երեքի քուէարկութեան ժամանակ մասնակցել, որովհետև 1843 թուի կանոնների 26 յօդուածով ասուած է, որ ձայն չունի միայն այն թեկնածուն, որին ընտրում են։

Առաջադրում եմ Ձեզ, ողորմած պարոն, ղեկավարուել այս ցուցմունքներով պատրիարք Կաթուղիկոսի առաջիկայ ընտրութեան ժամանակ։ Ներքին Գործերի Նախարարի տեղ՝ Նախարարի Խորհրդի անդամ Մորոզով. դիրեկտոր ԲԱՐԶՐԱԳՈՅՆ Դրան Հոգմէյստրի պաշտօնով՝ Ա. Խարուզին։

Սինոդը պ. Նախարարի այս ցուցումների գործադրութեան դժուարութիւնները նախատեսելով՝ տարս այս հոկտեմբերի 26-ին № 2492, գրում է Տ. Փոխարքային.

«Ներքին գործերի պ. Նախարարը այս հոկտեմբերի 7-ին Հայ-լուսաւորչական Սինոդի պրոկուրորի անունով ամենայն Հայոց կաթուղիկոսի ընտրութեան կարգի վերաբերութեամբ մի քանի ցուցումներ է արել.

Պրոկուրորի հարցին, թէ ընտրութիւններին ներկայ եղող հոգևորական պատգամաւորը, որ ի պաշտօնէ ունի ընտրողի իրաւունք (Այլադ. Օր. Հաւաք. յօդ. 1120 և 1122,) կամ նշանակուած է (1120), կարող է ունենալով իւր մի ձայնը, ունենալ և դրա հետ իրան լիազօրող (ըստ 1120 յօդ.) բոլոր ուրիշների ձայները»։

Ներքին գործերի պ. Նախարարը իւր յիշեալ առաջադրութեան 7-րդ կէտում բացատրում է. «Պատրիարքի ընտրութեան մասնակցող, թէ խոկապէս ընտրական իրաւունքով կոչուածները, և թէ թեմական առաջնորդից նշանակուած (Այլադ. Օր. Հաւաք. յօդ. 1120) պատգամաւորները կարող են օգտուել միմիայն իրանց ձայնով։ Մի քանի թեմական առաջնորդների յանձնաբարութիւնը մի և նոյն հոգևորական անձին, զանազան թեմերի կողմից ներկայացուցիչ լինել, չի կարող օրինական ոյժ ունենալ. որովհետև նոյն հոգևորական

անձը, որ չի ենթակայում, ըստ օրինի, այն թեմերի առաջնորդներին, որոնց թեմերի կազմի մէջ չի մտնում, կարող է միայն իւր թեմական առաջնորդի շահերի ներկայացուցիչը լինել, առաջնորդի, որ Այլադ. Օր. Հաւաք. առաջ բերած 1120 յօդուածի ճիշդ մտքին համաձայն, ուղարկում է նրան Էջմիածին վերև ցոյց տուած նպատակով, որպէս իւր ներկայացուցիչ: Նոյնպէս և աշխարհիկ պատգամաւորները, որոնք ընտրւում են նոյն թեմի ծխերից, չեն կարող ներկայացուցիչ լինել այն թեմերի, որոնց չեն վերաբերում»:

Էջմիածնի Սինօդը ներքին Գործերի պ. Նախարարի բացատրութեան դէմ չի առարկում, թէ պատգամաւորները կարող են միայն երանց մի ձայնից օգտուել: Բայց եթէ ներքին Գործերի պ. Նախարարի առաջարկութեան մէջ բերած կէտի երկրորդ մասի միտքը կապ ունի այն բանի հետ, որ հոգևորական պատգամաւոր կարող է լինել կամ թեմական առաջնորդը կամ իւր թեմի հոգևորական անձերից մէկը, այսինքն իւր խոկ ստորադրեալներից, խոկ աշխարհիկ պատգամաւորը պէտք է ընտրուած լինի միայն նոյն թեմի ծխականների թուից, խոկ այդ բացատրութեամբ փոխւում է պատգամաւոր նշանակելու կարգը, որ պահպանւում է ամենայն Հայոց կաթուղիկոսի ընտրութեան ժամանակ 1843 թուի կանոնների հրատարակութեան օրից սկսած. Միւս կողմից, ներքին Գործերի, պ. Նախարարի ներմուծած կարգը օրէնքով ևս որ և է հիմք չունի. որովհետև Այլադ. Օր. Հաւաք. հատ. XI, մասն I. յօդ. 1120, թոյլ է տալիս թեմական առաջնորդին ներկայացուցիչ կարդել «հոգևորական անձերից և նրան, որին ինքը դրա համար կուզենայ»: Նոյնպէս և աշխարհիկ պատգամաւորը, օրէնքի նոյն յօդուածով ընտրւում է բոլոր մելիքներից, իւղբաշիներից և հայ-լուսաւորչական եկեղեցու այլ անդամներից, «որոնք կարող են առ այդ երաւունք ունենալ այդ եկեղեցու հին սովորութեան համեմատ»:

Այսպէս, չէ սահմանափակուած այն անձերի շրջանը, որոնց թուից պէտք է նշանակուի թեմական առաջնորդի ներկայացուցիչը, կամ ընտրուի նոյն թեմի աշխարհական պատգամաւորը:

Առաջբերուած 1120 յօդուածով սահմանուած կարգը գործնականապէս, ինչպէս յայտնի է, մինչև այժմ ոչ մի թիւրիմացութիւն առաջ չի բերել»:

Բացի սրանից. Սինօդը կարծում է, որ անհրաժեշտ է ունենալ ի նկատի, թէ ներքին Գործերի Նախարարի առաջարկած պատգամաւոր նշանակելու նոր կարգի կիրառութիւնը ամե-

նայն Հայոց կաթուղիկոսի առաջնիկայ ընտրութիւնների ժամանակ, կարող է լուրջ բարդութիւններ առաջ բերել հետեւեալ պատճառներով։ Մինչև ընտրութիւնները (11 դեկտեմբերայ) այնքան սակաւ ժամանակ է մնացել, որ համարեա անհնարին է ծանուցանել կայսերութեան սահմաններից դուրս եղած բոլոր թեմերին, որոնք մասամբ արդէն ընտրել են իրանց պատգամաւորները, այնպէս հաշուելով՝ որ թեմերը կարողանան ժամանակին ընտրել և ուղարկել իրանց ծխականների թուից պատգամաւորներ։ Յետ այնորիկ, անկասկած է, որ ձմեռնային ժամանակին ու ճանապարհների անյարմարութիւնները լուրջ արգելքներ կը դառնան պատգամաւորներին Թուրքիայի Փոքր-Ասիական հեռաւոր գաւառներից Էջմիածին հասնելուն։

Նոյնպէս և շատ պատերազմական ժամանակը, որ ընդունակ է Թուրքիայի բոլոր ընակիչների մէջ յուզուած տրամադրութիւն զարթեցնել մանաւանդ դէպի քրիստոնեայ տարրը, հաւանօրէն, ոչ սակաւ կաղդի Թուրքիայի հպատակ հայերին վճռել-ուղարկել իրանց պատգամաւորներին»։

«Ի նկատի ունենալով վերև յիշուածները Էջմիածնի հայ լուսաւորչական Սինոդը պատիւ ունի խնդրել Ձերդ Գայծառափայլութիւնից, ընդունելով, որ ներքին Գործոց Նախարարի առաջարկութեան 7 դ կէտը հաղիւ թէ կարելի լինի ի կիր արկանել ամենայն Հայոց պատրիարք կաթուղիկոսի առաջնիկայ ընտրութեան ժամանակ, ներքին գործերի Նախարարի հետ համաձայնութեան գալով՝ թոյլ տալ այժմեան ընտրութիւնները ևս կատարել նախորդ ընտրութիւնների, գործնականապէս նոր երդագործուած, կարգով, որ ցոյսոր տարակուսութիւններ չէ առաջացրել»։

Ց. Փոխարքայի միջնորդութեանը հետևում է հետևեալ կարգադրութիւնը, որ Հոդևոր Դեպարտամենտի դիրեկտոր Խարուղինը նոյեմբերի 15-ին հեռագրում է Սինոդին.

«Որովհետև մինչև կաթուղիկոսի ընտրութիւնները սակաւ ժամանակ է մնում, ներքին Գործերի Նախարարութիւնը արդեզը չի գտնում թոյլ տալու, որ այժմեան ընտրութիւններին մասնակցեն բոլոր հոգևորական և աշխարհական պատգամաւորները. թէև ունենային նրանք մի քանի թեմերի լիազօրութիւն, կամ ներկայացուցիչ լինէին այն թեմերի՝ որոնց իրանք չեն էլ պատկանում։ Դրա համար էլ հոկտեմբերի 7-ին № 9005 առաջադրութեան 7 կէտը պէտք չէ ի կիր արկանել»։

թէ ովքեր չեն կարող ընտրութեան համար պատգամաւոր լինել:

Ներքին Գործոց Նախարարութիւնը Հոգևոր գործերի Դեպարտամենտից նոյեմբերի 3-ին № 9916. գրում է Էջմիածնի Սինոդի պրոկուրորին.

Պատասխանելով Ձեր անցեալ հոկտեմբերի 18-ին № 315 առաջարկութեան թէ պատրիարք կաթուղիկոսի ընտրութիւնների համար կարող են պատգամաւոր ընտրուել քննութեան և դատի տակ եղած անձինք, պարտք եմ համարում յայտնել Ձերդ Գերազանցութեան, թէ պետական ներգործող օրէնքների համեմատ, որոնք սահմանում են ռուս քաղաքացիների ընտրական իրաւունքները իրագործող հիմնական կանոնները (Օրէնք հատ. I. մասն II. յօդ. 228, կէտ 3։ Պետական Դումայի ընտրութիւնների օրէնք [Положеніе о выборахъ въ Государственную Думу], հատ. II, յօդ. 27, կէտ 3,: Նահանգական և գաւառական Զեմսկ. հաստատութիւնների համար [Пол. о губернскихъ и уѣздныхъ Земск. учрежд.] և Քաղաք. Օրէնք. հատ II, յօդ. 33, կէտ 3 [город. Полож.], պատրիարքի ընտրութեանը մասնակցելու պէտք է թոյլ չտրուեն այն անձինքը, որոնք գտնուում են քննութեան և դատի տակ, մեղադրուելով այնպիսի գործերի մէջ, որոնց հետևանքն է իրաւունքից զրկումն կամ սահմանափակումն, կամ ծառայութիւնից դուրս արուել, և պաշտօնից արձակուել. նոյնպէս և նրանք, որոնք մեղադրուում են գողութեան, խարդախութեան, յանձնուած գոյքը ուրացնելու, գողոնքը թաքցնելու, առաջուց յայտնի գողոնքը խաբեբայութեամբ գոյքեր գնելու ու դրաւ ընդունելու և վաշխառութեան մէջ:

Պարտք եմ համարում կցել, թէ կաթուղիկոսի ընտրութեանը չեն կարող մասնակցել, Պետական Դումայի ընտրութիւնների համար 1907 թ. հրատարակուած Օրէնքի I. հատ. II մասն 228 յօդուածի 1, 2, 3, 4, 5, 6 և 7 կէտերում թուած անձինք:

Յիշածներս առաջադրում եմ Ձեզ, ողորմած պարոն, ի գեկավարութիւն պատրիարք կաթուղիկոսի առաջիկայ ընտրութիւնների ժամանակ: Ներքին Գործերի Նախարարի փոխանակ, Նախարարի խորհրդի անդամ Մորոզով. Դիրեկտոր, ԲԱՐԶՐԱԳՈՅՆ ԴՐԱՆ Հոգմէյստերի պաշտօնով, Ա. Խարուզին:

Նորադարձների իրաւունքը եկեղեցական թէ ծխական եւ թէ կաթուղիկոսական ընտրութիւններին մասնակցելու որպէս ընտրող եւ ընտրելի.

Բեսսարաբիայի և Նոր Նախիջևանի Հայոց կոնսիստորիան հրահանգութիւն էր խնդրել հայ դաւանութիւն ընդունած օտարազգիների մասին թէ նրանք կարող են ընտրութիւններին մասնակցել որպէս ընտրող և ընտրելի։

Սինոդը սեպտեմբերի 23-ին № 2258 գրում է.

. . . Սինոդիս Կառավարչական Մասը յայտնում է կոնսիստորիային, թէ մեր դաւանութիւնը ընդունած ուղղափառներին ու հրէաներին առհասարակ ծխական ժողովներում և մասնաւորապէս կաթուղիկոսական ընտրութեանը վերաբերեալ ժողովներում ընտրելու և ընտրուելու իրաւունք տալու խնդրում պէտք է առաջնորդուել՝ առաջին դէպքում ծխ. կանոնագրութեան 2, 4, 5 7, 9, և 10 յօդուածներով, իսկ երկրորդ դէպքում՝ այս տարուայ ապրելի 25-ին № 290 շրջաբերականով. համարելով վեցամսեայ և երկամեայ ժամանակամիջոցները այդ նախկին ուղղափառների և հրէադաւանների մեր եկեղեցու ծոցը մտնելու օրից»։

Ովքեր կարող են Կաթողիկոսութեան ընտրելի լինել.

Ներքին Գործերի Նախարարութեան Հոգև. գործերի Դեպարտամենտը մայիսի 4-ին № 418. գրում է Սինոդի պրոկուրորին,

«Հոգևոր Գործերի Դեպարտամենտին ուղղած Ձեր Գերազանցութեան ապրելի 17-ի № 123 գրութեան բովանդակութիւնը զեկուցուեց պ. Նախարարին. և նորին Բարձր Գերազանցութեանը հաճելի եղաւ յանգել հետևեալ եզրակացութեան.

Թէև օտարադաւանների կանոնագրութեան մէջ ցուցմունք չկայ, որ կաթուղիկոսութեան թեկնածու ընտրուածները պէտք է լինեն միայն հոգևորականներ, սակայն այդ լռութիւնը, անկասկած, չպէտք է բացատրուի այն մտքով,

թէ ուրեմն աշխարհական անձեր ևս կարող են ընտրուել։ Պատրիարք-կաթուղիկոսի բարձր աստիճանը ինքն ըստ ինքեան պահանջում է, որ տուեալ անձը կանխագոյն երկար ժամանակեայ պատրաստութեամբ սերտ կապուած լինի եկեղեցու՝ որպէս քրիստոնէական հաստատութեան հետ։ Այսպիսի միութիւնը ձեռք է բերւում երկարամեայ արիաջան արքաշնագործ պաշտօնէութեամբ։ Այդ պատճառով էլ երբ օրէնքը չի շեշտում թէ կաթուղիկոսը պէտք է ընտրուի յատկապէս հոգևորականներից, պէտք է հասկացուի այն մտքով, որ մի շատ բնական բանի համար կարիք չէ եղել առանձին ցուցմունքի։

Յետ այսորիկ, դառնալով այն բանին, թէ հոգևորական անձերի ո՞ր դասակարգից կարող են լինել կաթուղիկոսութեան համար ընտրելի թեկնածուները, անշուշտ պէտք է ի նկատի ունենալ, որ բնական թեկնածու կարող են լինել, պատրիարքի բարձր դիրքը պահպանելու նկատումով, միայն այն անձերը, որոնք իրանց երկարամեայ ծառայութիւնների շնորհիւ հասել են նուիրապետութեան բարձր աստիճաններին։ Ուստի և այն ցուցմունքը որը բարձրաստիճան հոգևորականների վերաբերութեամբ բոլորովին որոշ ձևով յայտնուած է կաթուղիկոսական ընտրութեան համար սահմանուած 1843 թ. յունվարի 5-ի կանոններում (յոդ. 21, նոյնպէս և 15 և 17) պէտք է համարել ուղիղ։

Ինչ վերաբերում է այն հարցին, թէ հայ լուսաւորչական եկեղեցու հոգևորականներից որոնց պէտք է համարել բարձրաստիճան հոգևորականներ (САНОВНИКЪ),-թէև այլադաւանների կանոնագրութեան 1169 յոդուածը նոյն օրինագրքի 1170 և 1208 յոդուածներին զուգադրելով ցոյց է տալիս, որ բարձրաստիճան հոգևորական կոչւում են միայն արքեպիսկոպոսական աստիճան ունեցողները, սակայն որովհետև քրիստոնէական եկեղեցում կայ եռակարգ նուիրապետութիւն, և արքեպիսկոպոսը պատկանում է եպիսկոպոսական կարգին, ուրեմն ակներև է, որ բարձրաստիճան հոգևորական կոչման տակ պէտք է հասկանալ բոլոր եպիսկոպոսներին։

Այս առաջ բերածները ի նկատի ունենալով պ. Նախարարը բարեհաճեց համարել, որ պատրիարքական գահի համար որպէս թեկնածու այնպիսի անձերի ընտրութիւնը, որոնք արքեպիսկոպոսական կամ եպիսկոպոսական աստիճան չունեն, մանաւանդ որոնք աշխարհական կոչումից են, որպէս օրինական հիմք չունեցող գործ, ոչ մի կերպով չի կարող ընդունելի լինել։

Նորին Բարձր Գերազանցութեան պատուէրին համեմատ Դեպարտամենտը այս մասին պարտք է համարում յայտնել Ձերդ Գերազանցութեան տեղեկութեան և հրահանգութեան համար»։

Ընտրական ժողովները կատարելու արտօնութիւն.

Տ. Փոխարքան Նոյեմբերի 18-ին № 24,306. գրում է Սինոդին.

Ամենայն Հայոց Ծայրագոյն պատրիարքը Կաթուղիկոսի թեկնածուների ընտրութիւնները կատարելու համար նշանակած դեկտեմբերի 11-ը մօտեցած լինելով, առաջադրում եմ Սինոդին, այդ օրը բանալ ժողովը և ձեռնարկել ընտրութիւններին պահպանելով այն կարգը, որը սահմանուած է առանձին կանոններով և որը Անդր-Կովկասի կառավարչապետ գեներալ-ադիւտանտ Նեյդգարդը 1843 թ. հաստատել էր և ես 1908 թուին փոփոխել եմ։

Յիշեալ կանոնների մի օրինակը ուղարկելով ղեկավարուելու համար՝ յաւելացնում որ, որպէս Բարձր Կառավարութեան կողմից ներկայացուցիչ պատրիարք-Կաթուղիկոսի ընտրութիւններին ներկայ կը լինի Երևանի Նահանգապետ, Բարձրագոյն Դրան Հոֆմէյստեր, գրաֆ Տիզենհաուզէն։

Ամենայն Հայոց Կաթուղիկոսի ընտրության կարգը.

ԿԱՆՈՆՔ

Ի ՀՐԱՀԱՆԳՈՒԹԻՒՆ ՅԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԵՒ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի Տ. ՓՈԽԱՐՔԱՅԷՆ ԿՈՎԿԱՍՈՒ Ի ԳԵՆԵՐԱԼ-ԱԴԻՒՏԱՆՏ ԿՈՄՍ ՎՈՐՈՆՑՈՎ-ԴԱՇԿՈՎԷ ՅԱՄԻ 1908.

ԳԼՈՒԽ Ա.

Յաղագս անձանց, որք մասնակցին յընտրության Ծայրագոյն Պատրիարքի եւ Կաթուղիկոսի:

Յօդ. 1. Ըստ 13-րդ յօդուածոյ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ հաստատեալ Օրէնսդրութեան ի 11-ն մարտի 1836 ամի՝ յաղագս կառավարութեան գործոց Հայաստանեայց եկեղեցւոյ ի Ռուսաստան, ընտրութիւն Ծայրագոյն Պատրիարքի և Կաթուղիկոսի լինի ընդ ձեռն պատգամաւորաց առաքելոց յիւրաքանչիւր վիճակաց երկու երկու, հոգևորական և աշխարհական: Եկեղեցական պատգամաւոր պարտի լինել կամ ինքն թեմական Առաջնորդն կամ եկեղեցական ոք, զոր կարգեսցէ նա. իսկ աշխարհական պատգամաւորն ընտրի յամենայն պատուաւորաց Հայոց, ի մելիքաց, ի հարիւրապետաց և յայլոց յարգելի աշխարհական անդամոց Հայաստանեայց եկեղեցւոյ՝ որ ունին իրաւունս ընտրելոյ ըստ վաղեմի սովորութեան այսր եկեղեցւոյ:

Յօդ. 2. Այսոքիկ ընտրեալ պատգամաւորք եթէ ոչ կարասցեն գալ անձամբ ի Ս. Էջմիածին մինչ ցսահմանեալ ժամանակն ընտրութեան Պատրիարքի, ունին իրաւունս գրաւոր յայտնել զկարծիս իւրեանց և հաստուցանել զայն ի Սինօդն Ս. Էջմիածնի:

Յօդ. 3. Բաց ի պատգամաւորաց մասնակցին ընտրութեան Պատրիարքի ամենայն անդամք Սինօդի ս. Էջմիածնի և եօթն եպիսկոպոսունք յերիցագունեցն, որք ի ժամանակին յայնմիկ եղեցեն ի ս. Էջմիածին, իսկ առ ի չգոյէ այնր թուոյ եպիսկոպոսաց, լրասցի այն յաւագագոյն վարդապետաց տեղւոյն:

Յօդ. 4. Պրոկուրորն Սինոդի ս. Էջմիածնի պարտի ներկայ լինել ի ժամ ընտրութեան Ծայրագոյն Պատրիարքին ս. Էջմիածնի յաղագս հսկելոյ կարգին և բացատրելոյ զկանոնս ընտրութեան ի դէպս ծագելոյ որոց և լցէ երկրայութեանց ըստ այսմ առարկայի (Օրէնդրութիւն յաղագս կառավարութեան Հայաստանեայց եկեղեցւոյ, յօդուած 46)։

Մեկնութիւն. Եթէ երկրայութիւնքն այնոքիք առնուցուն զդարձուածս անպատշաճս կարգաց և բարեվայելչութեան, զոր պարտ է պահել ի ժամ ընտրութեանն, յայնժամ իրաւունք են աւագագոյն Անդամոյ (Կատարողի պաշտաման Կաթուղիկոսի) թողուլ զժողովն յաջորդ աւուր, հնարս ի ձեռս առնելով վասն ածելոյ ի համաձայնութիւն զծագեալ երկրայութիւնս։

Յօդ. 5. Ընտրութիւնն կատարի ի ս. Էջմիածին ի Մայր Տաճարն Սրբոյն Գրիգորի Լուսաւորչի՝ խոտագոյն պահպանութեամբ արարողութեանց ստմանելոց ի Հայաստանեայց եկեղեցւոյն, որք ամփոփին ի յառաջիկայս։

Գ. Լ. Ո Ի Խ Բ.

Յաղագս նախընթաց կանոնաց, որք պարտին կատարիլ նախ քան զընտրութիւնն։

Յօդ. 6. Ի գալ հասանել մէն մի թեմական առաջնորդի. Տեղակալն Ատենապետի Սինոդի Ս. Էջմիածնի, Աւագագոյն Եպիսկոպոսն Տաճարին ս. Էջմիածնի՝ առաքէ ընդ առաջնորդս դեպիսկոպոս մի և դերկուս վարդապետս, որք յետ քաղաքաւարն ողջունի առաջնորդին նմա յայտնեալ օրինանն։ Իսկ աշխարհական պատգամաւորացն ընդ առաջ ելանէ ի Ղազարապատէն կարգեալ հիւրընկալ եկեղեցականն, որ և ուղեցանէ զնոսա ի սենեակս Ղազարապատին։ Հիւրընկալն արձանագրէ յառանձին մատեանի զանուանս ամենայն պատգամաւորաց եկելոց, նշանակելով զօր ժամանման իւրաքանչիւր ուրուք։

Յօդ, 7. Յետ ժամանելոյ ամենայն պատգամաւորաց՝ հոգևորականաց և աշխարհականաց, յետ ընդունելոյ զդրաւոր կարծիս առաքեալս ի Սինոդն և զառաջադրութիւն Տեառն Փոխարքային Կովկասու վասն բացման ժողովոյն, նոյն իսկ հոգևորական անձն առաջի առնէ ի Սինոդն զցուցակ եկեալ պատգամաւորացն։ Յայնժամ իսկ Սինոդն որոշէ զօր ընտրու-

թեան Պատրիարք-Կաթուղիկոսի և կաղմեալ զօրագիր ըստ այսմ առարկայի՝ զբաղուածն յայնմանէ մատուցանէ Տեղակալին Ամենապետի Սինոդի վասն կախեալն զնմանէ տնօրէնութեանց առ ի կատարել զորբազան պաշտամունս ըստ հետագայնոյ։

Յօդ. 8 Վասն գրագրութեանց Ժողովոյն Սինոդն ս. Էջմիածնի կարգէ զԱմենապատիւն իւր և զերկուս Օգնականս նորա։

Գ. ԼՈՒՍԻ Գ.

Յաղագս մանրամասնութեանց ընտրութեան չորից երիցագոյն թեկնածուաց եւ վասն քուէարկելոյ ի նոցանից զերկուս թեկնածուս յաստիճան Ծայրագոյն Պատրիարքի։

Յօդ. 9. Նախ քան զընտրութիւն երիցագոյն թեկնածուաց ի տաճարին ս. Էջմիածնի առաջի սեղանոյ Իջման Որդւոյն Միածնի զնի գրատեղան, ծածկեալ կարմիր մահուտիւ վասն ներկայ պատգամաւորաց և հոգևորականացն ի միաբանութենէ Վանից ս. Էջմիածնի, և այլ առանձին սեղան վասն Պրոկուրորի Սինոդի Էջմիածնի։

Յօդ. 10. Ի վերայ սեղանոյն զնին Խաչ և Աւետարան, և երկուստեք աշտանակք երկու արծաթի՝ լուցեալ ճրագօք։ Բայց յայտնանէ. 1, Տպագրեալ օրէնսդրութիւն յաղագս Կառավարութեան գործոց Հայաստանեայց եկեղեցւոյ ի Ռուսաստան և կանոնք վասն ընտրութեան Ծայրագոյն Կաթուղիկոսի. 2, Հինգ ընտրողական թերթք՝ չորքն ըստ ձևոյն № 1 և մին՝ ըստ ձևոյն № 1, որք ընդ սմին. 3, Անուանական ցուցակ համայն աշխարհական պատգամաւորաց՝ որ ունին իրաւունս ընտրելոյ զԾայրագոյն Կաթուղիկոսն ըստ վաղեմի սովորութեան Հայաստանեայց եկեղեցւոյ (յօդ. 13). 4, Անուանական ցուցակ սահմանեալ թուոյ հոգևորականաց ի միաբանութենէ Վանից ս. Էջմիածնի և պատգամաւորաց եկելոց յընտրութիւնն. 5, Դրաւոր կարծիք պատգամաւորաց՝ որք ոչ կարեն անձամբ ներկայ լինել յընտրութեանն, 6, Անուանական ցուցակ պատգամաւորաց, որք թէպէտ և պարտ էին ներկայ լինել ի Ժողովին, բայց չեն ժամանեալ անդր և ոչ առաքեալ ի Սինոդն զկարծիս իւրեանց, և վերջապէս 7, Առաջադրութիւն Տ. Փոխարքային Կովկասու առ ի բանալ զԺողովն։

ԳԼՈՒԽ Դ.

Յաղագս կարգի պարապմանց ժողովոյն.

Յօդ. 11. Ի սահմանեալ աւուրն ընտրութեան Յայրագոյն Պատրիարքը Կաթուղիկոսին պատգամաւորք ժողովին յիններորդում ժամու առաւօտեան ի Կաթուղիկոսական վեհարանն, ուրանօր ընդունին զնոսա Աւագագոյն եպիսկոպոսն տաճարին ս. Էջմիածնի և միւս անդամք Սինօդին: Յետ այսրիկ Աւագագոյն եպիսկոպոսն հրաւիրէ զնոսա յեկեղեցի յունկնդրութիւն ս. պատարագի և գոհացողական մաղթանաց վասն առողջութեան և երկարութեան կենաց ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ և բոլոր ՕԳՈՍՏԱՓԱՌ ՏԱՆՆ, և յաղագս երդմնեցուցանելոյ զաշխարհական պատգամաւորս առ ի պահպանութիւն կարգաց և անկողմնակալութեան յառաջիկայ գործն:

Ծանօթութիւն. Հոգևորականքն ոչ ածին յերդումն այնու ենթադրութեամբ, զի պարտին նոքա ըստ պարտուց և ըստ արքական առաւելանի իւրեանց պահպանել զկանոնսն զայնոսիկ:

Յօդ. 12. Մուտն ի Տաճարն կատարի այսու կարգաւ. յառաջոյ ընթանայ կատարողն պաշտման Պատրիարքը Կաթուղիկոսին (Երիցագոյն Անդամ Սինօդի). ապա պատգամաւորքն Պատրիարքաց Երուսաղէմի, Սսայ, Աղթամարայ և Կ. Պոլսոյ, զհետ նոցա երթան կարգաւ զոյգ զոյգ յաջմէ կողմանէ՝ Անդամք Սինօդի ս. Էջմիածնի և եօթն երիցագոյն եպիսկոպոսունք տեղւոյն՝ ուղեկցութեամբ Պրոկուրորի Սինօդի, իսկ յահեկէ՝ թեմական եպիսկոպոսունք կամ պատգամաւորք նոցա կարգաւ նոյնպէս զոյգ զոյգ ըստ աւագութեան աստիճանի ձեռնադրութեան նոցա, և ապա զհետ նոցա երթան աշխարհական պատգամաւորք նովին իսկ կարգաւ ըստ աւագութեան քաղաքացն և ի վերջ գնացեալն Ատենադպիրն Սինօդի ս. Էջմիածնի:

Ծանօթութիւն. Ի դէպս անյաջող եղանակի ոչ կատարի հանդիսաւոր մուտս այս, և պատգամաւորք ըստ հրաւիրանաց Աւագագոյն եպիսկոպոսի և պրոկուրորի Սինօդի ս. Էջմիածնի գնան ի Կաթուղիկոսարանէ յեկեղեցի առանց վերոյգրեալ արարողութեանն:

Յօդ. 13. Զպատարագն սուրբ զգոհացողական մաղթանս մատուցանէ հանդիսաւոր Աւագագոյն եպիսկոպոս տաճարին ս.

Էջմիածնի, իսկ զկնի աւարտման պատարագին և գոհացողական մաղթանացն վասն երկարութեան կենաց ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ և համայն ՕԳՈՍՏԱՓԱՌ ՏԱՆՆ ՆՈՐԱ, Աւագագոյն եպիսկոպոսն երդմնեցուցանէ զամենայն առաջիկայ աշխարհական պատգամաւորս ըստ սահմանեալ ձևոյն (ձև 3)։ Երդուեալքն ամենեքեան սորագրեն զանուանս իւրեանց ի թղթին երդման։

Յող. 14. Ի միւսում աւուր կատարման այսր ծիսի ամենայն ներկայ եղեալքն և որք ունին զիրաւունս ընտրութեան Պատրիարք Կաթուղիկոսի զտեղիս կայցին շուրջ զգրատեղանով, որ եղեալ կայ առաջի Սեղանոյ Ի՛ջման Որդւոյն Միածնի (§ 9), ի միջավայրին Կատարողն պաշտաման Պատրիարք Կաթուղիկոսի, յաջմէ կողմանէ նորա վերոյիշեալ պատգամաւորք չորից Պատրիարքաց և բոլոր հոգևորականք, որք ունին զիրաւունս ընտրելոյ զՊատրիարք Կաթուղիկոսն ըստ աւագութեան ձեռնադրութեան իւրեանց, իսկ ի ձախմէ կողմանէ աշխարհական պատգամաւորք ըստ աւագութեան կոչման իւրաքանչիւրոցն։

Մանրութիւն. Հոգևորական անձինք՝ որք ունին իրաւունս բազմել ի տաճարին ըստ ծիսի եկեղեցւոյն, պահպանեն զայսոսիկ իրաւունս և յայս դէպս, իսկ այլք ամենեքեան ընտրեն յոտին կացեալ։

Յող. 15. Նախ քան զամենայն երիցագոյնն ի բարձրատիճան հոգևորականաց գործակցութեամբ երկուց աւագ սարկաւագաց ընթեռնու զսաղմոս և աղօթս սահմանեալս ըստ ծիսի Հայաստանեայց եկեղեցւոյ վասն աւուրն պատշաճի, հուսկ ապա նոյն ինքն բարձրատիճան հոգևորականն ասէ քարոզ ըստ պատշաճի, յորում յանդիման կացուցանելով զվսեմութիւն գործոյն՝ որոյ վասն գումարեալ են, զպէտս եկեղեցւոյ և զբարօրութիւն՝ որում ակն ունի եկեղեցին յընտրութենէ արժանաւորագոյն Գլխոյ իւրոյ, հրաւիրէ զժողովն դուն գործել, ի բաց մերժելով զամենայն վնասակար աշառութիւն, զի ընտրեալ Գլուխն Հայաստանեայց եկեղեցւոյ կարասցէ ըստ ամենայնի պահպանել զարժանաւորութիւն վեհ ատիճանին իւրոյ, և առհասարակ զմասաւ ածել, զի զընտրութենէ արժանաւորագոյն Պատրիարք Կաթուղիկոսի ամենայն Հայոց կալեալ կայ ամենայն բարօրութիւն այն եկեղեցւոյ և Կաթուղիկէ Աթոռոյն ամենայն Հայոց Սրբոյ Էջմիածնի։ Հուսկ ուրեմն Պրոկուրորն Սինոդի ս. Էջմիածնի ընթեռնու զառաջադրութիւն Տեառն Փոխարքային Կովկասու վասն բացման ժողովոյն, և ժողովն Տեառն արկանէ յընտրութիւն աւագագոյն թեկնածուաց ըստ այսմ (§ 16 և հետևլ.)։

Յօդ. 16. Իւրաքանչիւր որ ի ժողովականացն տայ զկարծիս իւր վասն ընտրութեան աւագագոյն թեկնածուաց ազատօրէն, ըստ ուղիղ հասկացողութեան իւրում, ըստ մտքուր խղճի մտաց, առանց երկիւղի, և ոչ հայելով յառաջարկութիւն ինչ կողմնակի կամ ի գրութիւն մատնաւոր, թէև եցէ այն ի պատուաւորագոյն անձանց յազգէն Հայոց. ամենայն որ վարի այնպէս, զի կարասցէ տալ պատասխանի յամենայնի առաջի Տեառն Աստուծոյ: Ուստի և իւրաքանչիւր որ ի բաց մերժելով զամենայն յամառութիւն կարծեաց և անձին՝ ջանասցի տեսանել ի կարծիս հանուրց զհատատաուն հիմն ճշմարտութեան:

Յօդ. 17. Իւրաքանչիւր անդամ ժողովոյն զկարծիս իւր պարտի արտայայտել համառօտ, պարզ, ոչ հեռանալով առհասարակ յիսկական առարկայէն, յանդիման առնել նախ՝ զարժանաւորութիւն բարձրատիճան հոգևորականի առաջարկելոյն յինքենէ, ապա զազգացուցութիւնս և վերջապէս զակնկալեալն ի նմանէ օգուտ վասն եկեղեցւոյն:

Յօդ. 18. Ի ժամ յայտնելոյ զկարծիս սկսանելով ի կրտերագունէն և կարգաւ հասնելով առ երիցագոյն, չէ պարտ ումեք ընդհատել զբանս այլոց, կամ միջամտել ի խօսս նոցա մինչչև է աւարտեալ նորա զիւրն առաջարկութիւն: Յայտնեալ կարծիք միանգամայն գրին ի Պրոկուրորէն և յետ ջրութեանն ընթերցեալ լինին բարձրաձայն և վաւերացուցանին ստորագրութեամբ անդամոյն, որ տուեալ է զկարծիս:

Յօդ. 19. Պատգամաւոր եկեալ յԷջմիածին, եթէ ի պատճառս հիւանդութեան կամ այլոց անակնուելի գեպուածոց ոչ կարէ ներկայ լինել ի ժողովին, պարտի հասուցանել նմին զիւրն գրաւոր կարծիս, ոչ թողլով զայն առ վաղիւն: Զնոյն պարտին կատարել և Անդամք Սինոդի ս. Էջմիածնի, եթէ որ ի նոցանէ ոչ մարթասցի ներկայ լինել ի ժողովին ըստ անակնուելի հանգամանաց: Աղատ են ի տալոյ զգրաւոր կարծիս իւրեանց այնորիկ և եթ պատգամաւորք, որք ի պատճառս ծանու հիւանդութեան խոպառ ոչ կարասցեն տալ զոր և իցէ կարծիս:

Յօդ. 20. Զայնք ամենայն անդամոց ժողովոյս այսորիկ հաւատարք են միմեանց:

Յօդ. 21. Զկնի հաւաքման ամենայն ձայնից ժողովոյն և հասու լինելոյ գրաւոր բացագրութեանց հասելոյց ի Սինոդն ըստ 2 յօդ., յորելին աւագագոյն բարձրատիճան Հոգևորականք ըստ բազմութեան ձայնից տուելոց ի նպատաս նոցա՝ ճանաչին ունողք իրաւանց ընտրեալ լինելոյ ի թեկնածու, իսկ ի դէպս հաւասարութեան ձայնից՝ վիճակն որոշէ թէ ո՞ր համարելի է աւագ:

ծանօթութիւն. Գրաւոր յայտարարութիւնք բացակայ պատգամաւորաց պարտին ընդունիլ ի հաշիւ՝ հաւասար ձայնից ներկայ եղելոց յօգուտ այնը անձին, որ ի յայտարարութիւնն յայնոսիկ նշանակի յանուանէ:

ԳԼՈՒԽ Ե.

Ցաղագս թեկնածուաց երկուց թեկնածուած յատուկեան Ծայրագոյն Պատրիարք Կաթուղիկոսի.

Յօդ. 22. Ցերկրորդում կամ յերրորդում աւուր ի չորից վերոյգրեալ աւագագոյն թեկնածուաց անտի բոլոր առաջիկայ ժողովականք ընտրեն զերկուս թեկնածուս յատուկեան Ծայրագոյն Պատրիարքի:

Յօդ. 23. Ընտրութիւնն կատարի գաղտնի տուչութեամբ ձայնից հետագայ կարգաւ:

Յօդ. 24. Զկնի ընթեռնելոյ զպատշաճաւոր աղօթս և արտասանելոյ զհամառօտ բան համաձայն յիշատակելոյն ի վերոյ ի § 15, վերադասնի անուն առաջոյն ի չորից աւագագոյն թեկնածուաց::

Յօդ. 25. Ի կարգալն զանուն թեկնածուի կատարի քուէարկութիւն նորա քուէիւք. իրաքանչիւր ոք ի ներկայիցն, որոց են իրաւունք ընտրելոյ. ընդունի զիւրն քուէ ի ձեռաց նախագահողի ժողովոյն: Քուէատուութիւնն սկսանի ի կրտսերագոյն անդամոյ յաշխարհական պատգամաւորաց և հասանի կարգաւ ցերիցագոյնն:

ծանօթութիւն Յայտարարութիւնք բացակայ պատգամաւորաց ոչ ընկալեալ լինին ի հաշիւ ձայնից, քանզի ըստ զօրութեան § 77 ԲԱՐՁՐԱԳՈՅՆ հաստատեալ ի 1836 ամի Օրէնսդրութեան յաղագս կառավարութեան գործոց Հայաստանեայց եկեղեցւոյ ի Ռուսաստան՝ ընտրութիւնն պարտի լինել միմիայն ի ձեռն ներկայ եղեալ պատգամաւորաց:

Յօդ. 26. Թեկնածուն, զոր քուէարկեն ոչ մասնակցի քուէարկութեան:

Յօդ. 27. Պրոկուրոր Սինոդի զիւրաքանչիւր տուեալ քուէ նշանակէ յընտրողական ցուցակին հանդէպ ազգանուան որոյ տուեալ է զքուէն: Յորժամ ամենայն ներկայ անդամք տացեն զքուէս իւրեանց, ցուցակն առաջի առնի Նախագահողի ժողովոյն, որ ուրոյն ուրոյն համարելով զքուէս զընտրողականս և զոչ զընտրողականս՝ նշանակէ զթիւ նոցին ի պատշաճաւոր խորանս ընտրողական ցուցակին № 2 հանդէպ անուան քուէարկեալ թեկնածուին:

Յօդ. 28. Յետ այսորիկ Ծանուցանի Ներկայ Ժողովոյն թիւ ընտրող և ոչ ընտրող ձայնից, և սկսի ընտրութիւն միւս թեկնածուի նովին իսկ կարգաւ, և նոյնպէս մնացեալ երկուց թեկնածուաց:

Յօդ. 29. Յորժամ քուէարկի աւագագոյն Հոգևորական Անդամ Ժողովոյն, որ նախագահէ ի նմին, յայնժամ աւագագոյնն դկնի նորա յառաջիկայ հոգևորականաց համարէ զձայնս, անցուցանէ զայնոսիկ ի ցուցակ ելն, որպէս ցուցեալ է ի §27:

Յօդ. 30. Զկնի աւարտման արարողութեան ընտրութեանն ի ձայն ընթերցեալ լինի ցուցակն չորից ընտրեալ թեկնածուաց յորոց երկուքն՝ ունոգք գմեծագոյն թիւ ձայնից, համարեալ լինին թեկնածու յատուկեան Տայրագոյն Պատրիարքի:

Յօդ. 31. Յընտրողական ցուցակի չորից աւագագոյն թեկնածուաց նշանակի յանդիման երկուցն ի նոցանէ, թէ նորա ըստ առաւելութեան ձայնից՝ ի նպատա նոցին առ ելոց, արժանացեալք են թեկնածութեան ի կոչումն Տայրագոյն Պատրիարքի: Այս ընտրողական ցուցակ ստորագրի ի բոլոր անդամոց մասնակցելոց Ժողովոյն, վաւերացուցանի ի Պրոկուրորէն և առաջարկեալ լինի ուղ անկ է: Պատճէն յիշեալ ցուցակի ստորագրեալ յանդամոց Լինօղի ս. Էջմիածնի՝ վաւերացուցմամբ Աթենադպրի Նորին, մնայ ի գործս Սինօդի:

Յօդ. 32. Բաց ի ստորագրեալ ցուցակէն պատրաստեալ լինի առանձին օրագիր վասն ընտրութեան Տայրագոյն Պատրիարք Կաթուղիկոսին յերկուս օրինակս, որ ստորագրի ի բոլոր Ժողովականացն և վաւերացուցանի Աթենադպրէ Սինօդի ս. Էջմիածնի. մին յայնցանէ առաջարկի ուր անկ է, իսկ միւսն մնայ ի գործս Սինօդի:

Յօդ. 33. Յընթացս բոլոր ժամանակի պարապմանց Ժողովոյն ատենակալութիւն լինի ի աւանջեան, սկսեալ յիններորդ ժամու առաւօտու մինչ ցերկրորդ ժամն դկնի մշօրէի, իսկ յերեկոյի ոչ լինի ատենակալութիւն:

Յօդ. 34. Յետ աւարտման ընտրութեան և ստորագրելոյ երկուց օրինակաց ընտրողական ցուցակի և առանձին օրագրի վասն ընտրութեանն, Ժողովն առաքէ զպատգամաւորութիւն յերից անդամոց իւրոց՝ զմի հոգևորական և զերկուս աշխարհականս առ Տ. Փոխարքայն Կովկասու վասն առնելի ի կողմանէ նորա անօրէնութեան՝ ըստ 1125 յօդ. Կան. Օտար Դաւան. (Ժող. Օր. հ. XI, մ. I հրատ. 1896 ամի) և 21 յօդ. Օրէնգրք. վասն Կառավ. Կովկ. երկրի (Հ. II, ըստ շարուն. 1906 ամի):

Ուղիղ է.

Ի Տ. Դիրեկտորի Դիւանատան Փոխարքային Կովկասու Ն.

ՆԻԿՈԼԱԿԻ

Ստուգեաց՝ Գործավար Պ. **ԴՈՄԵՐՇԶԻԿՈՎ.**

Թարգմանութիւնս այս համեմատ է բնագրին.

Աթենադպիր Սինօդի ս. Էջմիածնի Ե. **Յովհաննիսեան**

(Տ. Գործ թ. 126/1907, առաջադրութիւն Տ. Փոխարքային Կովկասու ի 84 հոկտ. 1908 ամի, թ. 21887)

ՕՐԱԿԱՐԳ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

10—13 դեկտ. 1911 ամի. ի Ս. Էջմիածին.

Ա.

10 Դեկտ. Հանդիսաւոր. հոգեհանգիստ ի Տ. հանգուցեալ ՄԱՏԹԷՈՍ Բ. Կաթուղիկոսի գերեզմանի վերայ, ներկայութեամբ բոլոր հոգևորական և աշխարհական պատգամաւորների, Մայր Աթոռի միաբանութեան և պատուաւոր հիւրերի։

11 Դեկտ. 1. Կարգադրիչ Յանձնաժողովը նախապէս յայտնում է պատգամաւորներին, որ Վեհարան ժողովուին առաւօտեան ժամի 9-ին, լսելով երրորդի զանգի ձայնը։

2. Վեհարանում պիտի լինին այդ ժամին Տ. Տեղակալը, Օինօդի բոլոր անդամները, պ. Պրոկուրորը և Ատենադպիրը իւր օգնականներով։

3. Տ. Տեղակալը և Հ. Հ. անդամք ընդունում են պատգամաւորներին. Տ. Տեղակալը հրաւիրում է նոցա եկեղեցի ներկայ լինելու Ս. պատարագին և գոհացողական մաղթանքին։ Կարգադրիչ Յանձնաժողովը ցոյց է տալիս եկեղեցի գնալու կարգը ըստ Կանոնների § 12 (առանձին կազմած)։

4. Տ. Տեղակալը մատուցանում է Ս. պատարագը, որից յետոյ կատարուում է գոհաբանական մաղթանք։

5. Մաղթանքից յետոյ Տ. Տեղակալը երդմնեցնում է աշխարհական պատգամաւորներին։ (Առանձին փոքր սեղան Իջման տեղի առաջ, կարմիր մահուդով ծածկած, վրան Ս. Խաչ և Ս. Աւետա-

բան, գրիչ, թանաք երկու հատ թոռ)։ Ստորագրուած երդման թերթը յանձնուում է Սինոդի Ատենադպրին։

Բ.

12 Դեկտ. 1. Առաւօտեան վաղ Կարգադրիչ Յանձնաժողովը պատրաստել է տալիս պատգամաւորների տեղերը Մ. Տաճարում, իւրաքանչիւրի անունն ըստ ցուցակի գրած գնելով համապատասխան տեղում (Կանոնք, §§ 9—10)։ Երբորդի զանգը հնչելուս պատգամաւորները ժողովում են Վեհարան և այնտեղից իջնում են նախընթաց 3 կէտում յիշուած կարգով Մայր Տաճար, ուր գրաւում են իրանց համար նշանակուած տեղերը։

2. Տ. Տեղակալը երկու վարդապետների մասնակցութեամբ կարդում է հետևեալ աղօթքները.

ա) Օրհնեալ Տէր Մեր Յիսուս Քրիստոս, ամէն. Հայր մեր.

բ) Սաղմոս, փոխ, ձթ. «Զգործս ձեռաց մերոց ուղիղ».

գ) Վարդապետներից մէկը՝ Ի մէջ տաճարիս

դ) » միւսը՝ Հովիւ քաջ, հովիւ բարի.

3. Տ. Տեղակալը պաշտօնապէս բանալով ժողովը՝ ատենաբանում է ըստ Կանոն § 15։

4. Պ. Պրոկուրորը կարդում է Տ. Փոխարքայի գրութիւնը ի 18 նոյեմբ. տարեւոյս թ. 24063. իսկ այդ գրութեան թարգմանութիւնը կարդում է ատենադպիրը։

5. Ատենադպիրը կարդում է եպիսկոպոսների ընդհանուր ցուցակը։

6. Կատարում է ձայնատուութիւնը չորս թեկնածուների, որից յետոյ Ատենադպիրը կարդում է բացակայ պատգամաւորների գրաւոր կարծիքները։

7. Տ. Տեղակալը և պ. Պրոկուրորը հաշուում են ձայները և ընտրուած չորս աւագ թեկնածուների անունները մուծանում են ընտրական հայերէն և ռուսերէն ցուցակների մէջ, որ ստորագրում են բոլոր ժողովականները, սկսած կրտսերագունից, և ապա Տ. Տեղակալը և պ. Պրոկուրորը։

8. Տ. Տեղակալը փակում է նիստը և յայտնում է, որ յաջորդ օրը լինելու է ժողովի երկրորդ գումարումը։

Գ.

13 Դեկտ. 1. Կարգադրիչ Յանձնաժողովը վաղօրօք պատրաստում է Մ. Տաճարում չորս քուէատուփ. ժողովի գումարումը տեղի է ունենում նախորդ օրուան կարգով։

2. Ատենադպիրը մէկ-մէկ կարդում է պատգամաւորների անունները, սկսած կրտսերագունից, և նոցանից իւրաքանչիւրը ստանում է Տ. Տեղակալից իւր քուէն և ձգում է քուէատուփը։

3. Տ. Տեղակալը և պ. Պրոկուրորը իւրաքանչիւր տուած քուէն նշանակում են քուէ տուող պատգամաւորի անուան դէմ № 2 ցուցակի մէջ։

4. Քուէարկութիւնը աւարտելուց յետոյ Տ. Տեղակալը համարում է ամէն մի թեկնածուի

4.

ստացած քուէները մի հոգևորական և մի աշխարհական ընթերակայի ներկայութեամբ և նշանակում է ընտրողական և ոչ ընտրողական քուէների թիւը համապատասխան սիւնեակներում № 3 ցուցակի մէջ։

5. Բոլոր չորս թեկնածուների քուէարկութեան արդիւնքը № 3 ցուցակի մէջ արձանագրելուց յետոյ՝ Տ. Տեղակալը կարդում է այն ի լուր ամենեցուն և յայտարարում է, որ նոցանից քուէների մեծագոյն թիւ ստացող երկուսը համարուում են թեկնածու Կաթուղիկոսութեան Ամենայն Հայոց։

6 Ընտրութեան արդիւնքը արձանագրուում է № 3 ցուցակում ըստ Կանոն § 21։

7. Վերջին № 3 ցուցակի հայերէն և ռուսերէն օրինակները ստորագրում են բոլոր ժողովականները, սկսած կրտսերագունից, և ապա Տ. Տեղակալը և պ. Պրոկուրորը։

8. Կազմուում է ընտրութեան մասին օրագիր, հայերէն և ռուսերէն, որ և ստորագրում են բոլոր ներկայ եղող անդամները, պ. Պրոկուրորը և Ատենադպիրը։

9. Ընտրական գործողութիւններն աւարտելուց յետոյ Տ. Տեղակալը յայտնում է ժողովին ընտրութեան հետևանքը. եկեղեցականները Ս. Իջման սեղանի առաջ երգում են շարական դ. Թագաւոր փառաց Աստուած Հոգիդ. ապա՝ Պահպանիչ, Հայր մեր. և ցրուում են ժողովականները։

Ուղիղ է, Սինոդի Ատենադպիր

Ց. Յովհաննիսեան

	Ծննդեան տարեթ.	Հեռնադ. տարեթ.
Արքեպիսկոպոսներ եւ եպիսկոպոսներ ընդհանրական ցուցակ. (տես օրակարգ Բ. յօդ. 5)		
ՌՈՒՍԱՍՏԱՆ		
1, Կաթուղիկոսական Տեղակալ. կաթուղիկոսական ընտրութեան համազգային ժողովի առաջնորդ եւ Մինոգի Նախագահող Գէորգ արքեպ.	1847	1882
2, Սուքիաս արքեպս. միաբան Մ. Ա.	1837	1875
3, Ներսէս արքեպ. առաջնորդ Նոր Նախիջեւանի եւ Ռեսսարաբիոյ .	1844	1873
4, Անանիա արքեպ. առաջնորդ Շամախւոյ	1846	1894
5, Յովհաննէս արքեպ. միաբան Մ. Ա.	1846	1898
6, Բարդուղիմէոս եպիսկ. միաբան Մ. Ա.	1848	1901
7. Ղեւոնդ եպիսկ. Լուսարարապետ Մայր Տաճարի	1852	1901
8, Յուսիկ արքեպիսկ. անդամ Մինոգի եւ խմբագիր Արարատ ամսագրի.	1853	1901 1901
9, Սարգիս եպիսկ. Վանահայր Սեւանայ.	1852	1905
10, Աշոտ եպիսկ. Միաբան Մ. Աթոռոյ.	1850	1909
11, Մխիթար եպիսկ. առաջ. Աստրախանի	1865	1909
12, Մեսրոպ եպիսկ. անդամ Մինոգի եւ Մատենադարանապետ Մ. Աթոռոյ.	1865	1909
13, Եփրեմ եպիսկ. ժամ. կառավարիչ Վրաստանի եւ Իմեր. Հայոց թեմի,	1854	1910
14, Թորէն եպիսկոպոս փոխ-Թեմակալ Հայոց Երեւանի	1873	1910
Արտասահման		
ՏԱՃԿԱՍՏԱՆ		
15, Պատրիարք Հայոց Կ. Պոլսոյ Յովհաննէս արքեպ. . . .	1841	1899

Նախկին պատրիարքներ,	Ծննդեան տարեթ.	Հեռնագ. տարեթ.
16 Մաղաքիա արքեպ. Օրմանեան .		
17. Եղիշէ արքեպ. Դուրեան, .	1841	1886
———	1860	1898
18, Գրիգորիս արքեպիսկոպոս . .	1837	1872
19, Վահրամ արքեպ. պատրիարքական տեղապահ . . .	1846	1876
20, Եղնիկ արքեպիսկոպոս . .	1843	1879
21. Հմայեակ եպիսկ. քարոզիչ Բերայի	1839	1880
22, Ստեփաննոս արքեպ. առաջնորդ Նիկոմիդիոյ	1846	1886
23, Գէորգ արքեպիսկոպոս Երիցեան .	1852	1896
23, Մաղաքիա եպիսկոպոս քարոզիչ Ղալաթիայի	1848	1898
24, Յովսէփ արքեպ. առաջնորդ Վանայ.	1849	1898
25, Գաբրիէլ եպիսկոպոս . . .	1850	1898
26, Յակոբ եպիսկ. Աշտա-Փափազ .	1847	1898
27. Մովսէս եպիսկ. պատր. փոխանորդ Բաղդատի	1854	1899
28. Տրդատ եպիսկ. նախկ. առաջնորդ Կեսարիայի	1850	1899
39, Ներսէս եպիսկ. առաջ. Տարօնոյ .	1847	1909
30, Եղիշէ եպիսկոպոս Զիլինգիրեան .	1861	1910
31, Դանիէլ արքեպ. պատրիարքական տեղապահ Երուսաղէմի . .	1864	1910
32, Մկրտիչ եպիսկ. առաջ. Եգիպտոսի	1862	1910
33, Կարապետ եպիսկ. առաջ. Պանդըրմա-Բալքէսէրի . . .	1869	1910
34, Բարգէն եպիսկ. առաջ. Գաղատիոյ.	1868	1911
35, Զաւէն եպիսկ. առաջնորդ Տիգրանակերտի	1862	1911
36, Սմբատ եպիսկ. առաջ. Կարնոյ .	1870	1910
37, Թորգոմ եպիսկ. առաջ. Սեբաստիոյ.	1873	1910

	Ծննդեան տարեթ.	Հեռնադ. տարեթ.
ՊԱՐՍԿԱՍՏԱՆ		
38, Սահակ արքեպ. առաջնորդ Հայոց Պարսկաստանի և Հնդկաստանի.	1853	1898
39, Կարապետ եպիսկ. առաջ. Ատրպատականի Հայոց	1865	1909
ԵՒՐՈՊԱ		
41, Գէորգ եպիսկոպ. առաջ. Եւրոպայի	1852	1898

ՊԱՏԳԱՄԱՒՈՐՆԵՐ

Սինոդը դեկտեմբերի 7-ի նիստին քննելով առաջիկայ կաթուղիկոսական ընտրութեան համար նշանակուած հոգևորական ներկայացուցիչների և ընտրուած պատգամաւորների փաստաթղթերը, կազմում է հետևեալ ցուցակը

ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻՆ

ԸՆՏՐՈՂԻ ԻՐԱՒՈՒՆՔՈՎ ՄԱՍՆԱԿՑՈՂՆԵՐԻ ԱՆՈՒԱՆԱԿԱՆ

ՑՈՒՑԱԿ

Ամենայն Հայոց կաթուղիկոսի տեղակալ եւ Համազգային ժողովի նախագահ

1. Գէորգ արքեպիսկոպոս Սուրէնեան

Սինոդի անդամներ

2. Յուսիկ արքեպիսկոպոս Մովսիսեան
3. Մեսրոպ եպիսկոպոս Տէր Մովսիսեան
4. Սահակ վարդապետ Ամատունի
5. Յուսիկ վարդապետ Զոհրաբեան
6. Մատթէոս վարդապետ Մատթէոսեան
7. Բարգէն վարդապետ Աղաւելեան

Ս. Էջմիածնի աւագ միաբաններ

8. Սուքիաս արքեպիսկոպոս Պարզեան
9. Յովհաննէս արքեպիսկոպոս Շիրակունի
10. Բարդուղիմէոս եպիսկոպոս Գէորգեան
11. Ղևոնդ եպիսկոպոս Յովակիմեան
12. Աշոտ եպիսկոպոս Շախեան
13. Գրիգորիս վարդապետ Տէր Յակովբեան
14. Հմայեակ վարդապետ Արշարունի

Ա. ՌՈՒՍԱՍՏԱՆ

ա. Երեւանի կաթուղիկոսական թեմ.

15. Փոխ-թեմակալ Խորէն եպիսկոպոս Մուրադբէկեան
16. Աշխարհական պատգամաւոր Գրիգոր Տէր Խաչատրեան

բ. Վրաստանի եւ Իմերեթի Հայոց թեմ.

17. Ժամ. կառավ. Եփրեմ եպիսկոպոս Սուքիասեան
18. Աշխ. պատ. Յովհաննէս Սպէնդիարեան

գ. Ղարաբաղի թեմ

19. Առաջ. ներկայացուցիչ Բագրատ վարդ. Վարդազարեան
20. Աշխ. պատգ. Սամսոն Չէրքէզեան

դ. Շամախւոյ թեմ.

21. Թեմ. Առաջ. Անանիա արքեպիսկոպոս
22. Աշխ. պատ. Թադէոս Զաքարեան

Ե. Նոր-Նախիջեւանի եւ Բեսսարիոյ թեմ.

23. Առաջ. ներկայացուցիչ Տիրայր վարդ. միաբ. ս. Էջմ.
24. Աշխ. պատգ. Գէորգ Զուբար

զ. Աստրախանի թեմ.

25. Թեմ. առաջ. Մխիթար եպիսկոպոս Տէր Մկրտչեան
26. Աշխ. պատգ. Նիկողայոս Աւագեան (չէր եկած)

Բ. ՏԱՃԿԱՍՏԱՆ

է. Սսի կաթուղիկոսական տուն.

27. Հոգև. } չեն մասնակցել
28. Աշխ. }

ը. Աղթամարայ կաթուղիկոսական տուն.

29. Կաթուղ. պատգ. Յակոբ քահ. Խաչվանքեան, Ալէքսանդրապոլ
30. Աշխ. պատգ. Թաթէոս Խզմալեան, Ալէքսանդրապոլ

թ. Երուսաղէմի պատրիարքութիւն.

31. Պատր. ներկ. Բագրատ վրդ. Վարդապարեան, միաբ. Էջմ.
32. Աշխ. պատգ. Սամսոն Յարութիւնեան, Թիֆլիզ

ժ. Կ. Պոլսոյ պատրիարքական թեմ.

33. Պատր. ներկ. Յակոբ եպիսկոպոս Աշոտ Փափազեան
34. Աշխ. պատգ. Յովհաննէս Զիֆթէ-Սարաֆ

ժա. Թէֆիրդաղի թեմ.

35. Առաջ ներկ. Եղիշէ վրդ. Շահումեան, Սեւանի միաբ.
36. Աշխ. պատգ. Աղէքսանդր Խատիսեան, Թիֆլիս

ժբ. Ադրիանուպոլսի թեմ.

37. Առաջ. ներկ. Սիօն վարդ. Տ. Մանուէլեան միաբ. Էջմ.
38. Աշխ. պատգ. Երուանդ էֆ. Տէր Անդրէասեան

ժգ. Վառնայի թեմ.

39. Գրիգորիս Ծ. վրդ. Պալաքեան
40. Աշխ. պատգ. Գէորգ Ամիրեան, Երևան

ժդ. Մոլդովալախիայի թեմ.

41. Առաջ. ներկ. Ներսէս վրդ. Մելիք-Թանգեան միաբ. էջմ.
42. Աշխ. պատգ. Աբրահամ Նուհուպեան

ժե. Տրապիզոնի թեմ.

43. Առաջ. Սերովբէ վարդապետ Սամուէլեան
44. Աշխ. պատգ. Նշան Անդրէասեան

ժզ. Զանիկի թեմ.

45. Առաջ. փոխ. Տ. Գարեգին քհնյ. Շինիկճեանց
46. Աշխ. պատգ. Հայկ Հինդլեան

ժէ. Շապին-Գարահիսարի թեմ.

47. Առաջ. ներկ. Երուանդ քհ. Նալբանդեան, Սիմֆերոպոլ (չէր եկած)
48. Աշխ. պատգ. բժ. Գրիգոր Սաղեան, Բաքու

ժը. Թամզարա եւ Ացպտերի թեմ.

49. Առաջ. ներկ. Հմայեակ վարդ. Արշարունի միաբ. էջմ.
50. Աշխ. պատգ. Վրթանէս Փափազեան, Շուշի

ժթ. Ամասիայի եւ Մարզուանի թեմ.

51. Առաջ. Գէորգ Ծ. վարդապետ Իբրանոսեան
52. Աշխ. պատգ. Յարութիւն Գարամանեան

ի. Եւդոկիոյ (Թոխատ) թեմ.

63. Առաջնորդ Տ. Շաւարշ Ծ. վարդապետ Սահակեան
54. Աշխ. պատգ. Գէորգ Մկրտչեան

իա. Սեբաստիոյ (Սվազ) թեմ.

55. Առաջնորդ Տ. Թորգոմ եպիսկոպոս
56. Աշխ. պատգ. Արշակ Բաբեան, Թիֆլիս

ԻԲ. Կարնոյ (Երզրում) թեմ.

57. Առաջնորդ Տ. Սմբատ եպիսկոպոս
58. Աշխ. պատգ. Վահան Շահինեան

ԻԳ. Վանայ թեմ.

59. Առաջ. ներկ. Տ. Վահրամ վարդապետ միաբ. ս. Էջմ.
60. Աշխ. պատգ. Տիգրան Յովհաննիսեան, Թիֆլիս

ԻԴ. Լիմ եւ Կսուց անապատս.

61. Առաջ. ներ Տ. Ղեւոնդ քհն. Ալիխանեան, Թիֆլիս
62. Աշխ. պատգ. Համբարձում Առաքելեան, Թիֆլ.

ԻԵ. Բասենի (Հասան-Կալա) թեմ.

63. Առաջն. փոխանորդ Տ. Վահան վարդապետ
64. Աշխ. պատգ. Գէորգ Խաչիսեան, Թիֆլիս

ԻԶ. Բայազէդի թեմ.

65. Առաջ. Տեղապահ Տ. Ներսէս քահանայ
66. Աշխ. պատգ. Խաչատուր Աֆրիկեան, Թիֆլիս

ԻԷ. Մշոյ թեմ.

67. Առաջ. ներկ. Իսահակ վրդ. Տ. Միքայէլեան, միաբ. Էջ.
68. Աշխ. պատգ. Առաքել Սիմոնեան, Բաթում

ԻԸ. Քղւոյ թեմ.

69. Առաջնորդի ներկ. Տ. Սմբատ եպիսկոպոս
70. Աշխ. պատգ. Յակոբ Շաւարշ (Սամարդանդ)

ԻԹ. Բաղէշի թեմ.

71. (չկար)
72. Աշխ. պատգ. Սամսոն Չէրքեզեան, Թիֆլիս

Լ. Դերջանի թեմ.

73. Առաջնորդական փոխանորդ Տ. Հրանդ վարդապետ
74. Աշխ. պատգ. Գէորգ Էֆ. Աբուլեան, Կարին

լա. Բաբերդի (Բայբուրդ) թեմ.

75. Առաջն. Տեղապահ Տ. Տիրայր ծ. վարդապետ
76. Աշխ. պատգ. Խաչիկ Պողոսեան, Թիֆլիս

լբ. Երզնկայի թեմ.

77. Առաջ. փոխանորդ Տ. Եղիշէ քհ. Աբամեան
78. Աշխ. պատգ. Տիգրան Փափազեան

լգ. Ղնգուռայ թեմ.

79. Առաջ. ներ. Տ. Եղիշէ աւ. քհնյ. Գեղամեան, Բաքու
80. Աշխ. պատգ. Գարեգին Ենգիբարեան, Բաքու

լդ. Բալուի թեմ.

81. Առաջնորդի ներկ. Տ. Մուշէ վարդ. միաբ. ս. Էջմ.
82. Աշխ. պատգ. Արտաշէս Ճիսեան, Թիֆլիս

լե. Զարսանջակի թեմ.

83. Առաջն. ներկ. Տ. Բարգէն վարդապետ միաբ. ս. Էջմ.
84. Աշխ. պատգ. բժ. Յովհաննէս Յովհաննիսեան, Երևան

լզ. Խարբերդի թեմ.

85. Առաջ. ներկ. Պարգև ծ. վարդապետ Դանիէլեան
86. Աշխ. պատ. Աբրահամ Դաստակեան, Բաղու (չէր եկել)

լէ. Արաբկիրի թեմ.

87. Առաջն. փոխանորդ Տ. Կորիւն քահանայ
88. Աշխ. պատգ. Մինրդատ Հայկազն

լը. Սկնայ թեմ.

89. Առաջն. ներկ. Տ. Տրդատ քահանայ Պոյեաճեան
90. Աշխ. պատգ. Հայկ Անտոնեան

լթ. Քեամախու թեմ.

91. Առաջ. ներկ. Արշակ քհ. Տ. Մինասեան Թիֆլիս
92. Աշխ. պատգ. Յովհաննէս Տ. Միքայէլեան, Երևան

խ. Աղոնոյ թեմ.

93. Առաջն. ներկայացուցիչ Տ. Բենիկ վարդ. Էջմ. միաբ.
94. Աշխ. պատգ. բժ. Արտաշէս Շիսեան, Թիֆլիս

խա. Կեսարիոյ թեմ.

95. Առաջ. ներկ. Ռուբէն աբեղայ Մանասեան, Էջմ. միաբ.
96. Աշխ. պատգ. Մկրտիչ Հաճի Պալեան, Թիֆլիսաբնակ

խբ. Տիգրանակերտի (Դիարբէքիր) թեմ.

97. Առաջ. ներկ. Գարեգին վրդ. Յովսէփեան, Էջմ. միաբ.
98. Աշխ. պատգ. Ալէքսանդր Քալանթար

խգ. Քրդիստան (Սղերդ) թեմ

99. Առաջնորդի ներկ. Տ. Ընձակ վարդապետ միաբ. ս. Էջմ.
100. Աշխ. պատգ. Տիգրան Բէկզադեան, Բաքու

խզ. Եդեսիայի (Ուրֆա) թեմ.

101. Առաջն. ներկ. Տ. Ղևոնդ քհնյ. Ալիխանեան, Թիֆլ.
102. Աշխ. պատգ. Սիմէօն Տէր Մինասեան, Շուշի

իե. Բաղդատու թեմ.

103. Առաջ. ներկ. Տիրայր վրդ. Էջմ. միաբան
104. Աշխ. պատգ. Տիգրան Գուլումճեան, Կոկանդ

խզ. Գաղատիոյ (Էնկիւրիա) թեմ.

105. Առաջնորդ Տ. Բարգէն եպիսկոպոս
106. Աշխ. պատգ. Կարապետ Շահինեան

խէ. Զմիւռնիոյ (Իզմիր) թեմ.

107. Առաջնորդ Տ. Մատթէոս ծ. վարդ. Ինճէեան
108. Աշխ. պատգ. Յակոբ Միքայէլեան

խը. Եգիպտոսի եւ Կրետէի թեմ.

190. Առաջ. ներկ. Մեսրոպ աւագ քհն. Մելեան, Բաթում.
110. Աշխ. պատգ. Վահան Թէքէեան

խթ. Բանդրմա-Բալֆիէսէրի թեմ.

111. Առաջ. ներկ. Տ. Խաչիկ ծ. վարդապետ միաբ. ս. Էջմ.
112. Աշխ. պատգ. Թագուոր Տատուրեան

ծ. Գուդինայի թեմ.

113. Առաջնորդ Տ. Պարգև ծ. վարդ. Դանիէլեան
114. Աշխ. պատգ. Պետրոս Գալֆայեան.

ծա. Նիկոմիդիոյ (Իզմիդ) թեմ.

115. Առաջ. ներկ. Տ. Եփրեմ եպիսկոպոս կաս. Թ. Թեմի
116. Աշխ. պատգ. (չկար)

ծբ. Խուլիվանից (Զմեկածագ) թեմ.

117. Առաջն. ներկ. Տ. Արիստակէս վար. միաբ. ս. Էջմ.
118. Աշխ. պատգ. Մինրդատ Հայկազն

ծգ. Բրուսայի թեմ.

119. Առաջ. ներկ. Յուսիկ վրդ. Զոհրաբեան, Էջմ. միաբ.
120. Աշխ. պատգ. Յովհաննէս Յովհաննիսեան, Վաղարշպ.

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

ծդ. Ատրպատականի թեմ.

121. Առաջ. Կարապետ եպիսկոպոս
122. Աշխ. պատգ. Զաքարիա Նազարբէկեան

ծե. Պարսկաստանի եւ Հնդկաստանի թեմ.

123. Առաջ. ներկ. Դիոնեսիոս վարդապետ, Թիֆլ.
124. Աշխ. ներկ. Տիգրան Ռաշմաճեան, Ալէքսանդրապոլ

ԵՒՐՈՊԱ

ծզ. Արեւմտեան Եւրոպայի թեմ.

125. Առաջ. ներկ. Հմայեակ վրդ. Արշարունի, Էջմ. միաբ.
126. Աշխ. պատգ. Պետրոս Տօնապետեան

ԱՄԵՐԻԿԱ

ծէ. Ամերիկայի թեմ.

127. Առաջ. տեղապահ Պօղոս վարդ. Գաֆթանեան
128. Աշխ. պատգ. Համբարձում Ամպրուկեան

Պատգամաւորների լիազօրութեան ստուգում

Նախարարական բացատրութեան համեմատ պատգամաւորների ժողովը կարող էր ստուգել պատգամաւորների լիազօրութիւնները, ուստի և Տեղակալ Սրբազանի պաշտօնական գրութեամբ Կ. Պոլսոյ Հայոց պատրիարքի ներկայացուցիչ Տ. Յակովբ Սրբազանը մի օր առաջ, նախքան աշխարհական պատգամաւորների երդումը, գումարեց պատգամաւորների ժողով, որ ստուգելով լիազօրութիւնները կազմեց հետեւեալ արձանագրութիւնը և դեկտեմբերի 11-ին առաւօտեան 9 ժամին յանձնեց Սինոդին.

«ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ»

«Ի 10 դեկտեմբերի 1911 ամի, Ս. Էջմածին։

Նորաշէն Մատենադարանի դահլիճում երեկոյեան ժամը 5½-ին կայացաւ կաթուղիկոսական ընտրութեան համար ժողովուած պատգամաւորների պաշտօնական ընդհանուր ժողովը, որ բաց անելով ս. Յակովբ արքեպիսկոպոսը կարդաց Տեղակալ Գէորգ արքեպիսկոպոսի յետագայ պաշտօնական գրութիւնը ի 10 դեկտեմբերի 1911 թ. № 2194, այն է, «Խնդրեմ ի Սրբազնութենէ Ձերմէ բանալ զժողով պատգամաւորաց, որ վասն ընտրութեան Կաթուղիկոսի Ամենայն Հայոց, առ ի ընտրել առեան վասն ստուգելոյ զլիազօրութիւն պատգամաւորաց, ըստ վերջնոյ բացատրութեան Նախարարի, և յանձնարարել առենին զհետեւանս ստուգութեան գրաւորապէս մատուցանել Սինոդի ի տնօրէնութիւն»։

Այս հիման վերայ Աշոտ սրբազանը ժողովը բացուած հրատարակելով առաջարկեց ընտրել ժողովի դիւանը և ձեռնարկել պատգամաւորների լիազօրութեանց ստուգութեանը։ Ժողովը միաձայնութեամբ խնդրեց Նախընթաց մասնաւոր ժողովի միջոցաւ ընտրուած դիւանին վարել իր պաշտօնը—պատուաւոր նախագահ Տ. Յակովբ արքեպիսկոպոս Աշոտ-Փափազեան, առենապետ Սամսոն Յարութիւնեան, փոխ առենապետներ՝ Նշան էֆ. Անդրէասեան և Գէորգ Զուրար, քարտուղարներ՝ Մեսրոպ աւագ քհնյ. Մելեան և Հայկ Անտոնեան։

Գ. Առենապետը անցնելով իւր պաշտօնին, խնդրեց Սինոդի գործավար Յովհ. Մուշեղեանին կարդալ Ներքին Գործոց Նախարարութեան կողմից ստացած հոկտեմբերի 7-ին ընդ № 9005, Սինոդի պ. պրոկուրորի անունը ուղղած պաշտօնական գրութեան 1 կէտը, որով իրաւունք է տրւում պատգամաւորական ժողովին ստուգելու իր անդամների լիազօրութիւնները։

Սրանից յետոյ պ. Ատենապետն առաջարկեց պատգամաւորներին իրենց ստորագրութեամբ թերթի վերայ գնելու իրանց ներկայութիւնը, որից երևաց, որ ներկայ էին 94 պատգամաւոր։

Գ. Ատենապետը յայտարարեց ժողովին որ պ. Նախարարի վերը առաջ բերած գրութիւնը ի նկատի ունենալով, ս. Էջմիածնում գտնուած պատգամաւորները մասնաւոր կերպով ժողովուելով յանձնարարել էին իրենց կողմից Թորգոմ եպիսկոպոսին, Վարդապետեան Բագրատ և Մատթէոս Ինճիկեան վարդապետներին, իրաւաբաններից՝ Յովհաննէս Սպէնդիարեանին, Գէորգ Զուբարին, Գրիգոր Տէր Խաչատրեանին, Գարեգին Ենգիբարեանին և Կարապետ Շահինեանին ստուգութեան ենթարկելու պատգամաւորների ընտրութեան վերաբերեալ Սինոդի մէջ հաւաքուած բոլոր թղթերը, ընդհանուր ժողովին զեկուցանելու նպատակով։ Այդ նախապատրաստական աշխատանքը կարևոր էր համարուել վաղօրօք կատարելու, ի նկատի ունենալով ժամանակի սղութիւնը։ Արդ ընդհանուր ժողովին կմնայ ընդունել մասնաւոր կերպով կատարած ընդհանուր ժողովի որոշումը և լսել նրանց զեկուցումը կամ մերժել նրանց գոյութիւնը և վարուել ըստ իւր հայեցողութեան։ Ընդհանուր ժողովը հաւանութիւն տալով կատարուած գործողութեանը խնդրեց զեկուցանել։

Զեկուցումից երևաց, որ լիազօրութիւնները ընդհանուր առմամբ օրինաւոր են, ի բաց առեալ 8 անձից, որից 4-ի, այն է, Սիոն և Գրիգորիս Պալաքեան վարդապետների, Ամերիկահայոց կողմից երկու աշխարհականի և Սաթունեանի մասին չէին եկել ընդհանուր համաձայնութեան վերոյիշեալ անձինք, իսկ մնացած 4-ի, այն է, Եղիշէ վարդապետ Շահումեանի, Բարգէն վարդապետ Աղաւելեանի, Գէորգ Ամիրեանի, Գրիգոր Մկրտչեանի լիազօրութիւնների մասին բողոք յայտնեց միայն Ենգիբարեան։

Ժողովը վերոյիշեալներից օրինաւոր ճանաչեց Սիոն և Գրիգորիս վարդապետների և Ամերիկահայոց պատգամաւոր Համբարձում Ամպրուկեանի լիազօրութիւնները, իսկ Սաթունեանն ինքն իր լիազօրութեան հարցը լուծելու համար հեռագրով դիմած է Նախարարաց խորհրդի պ. Նախագահին և սպասում է պատասխանի, ուստի և դրական մտօք պատասխան ստանալուց յետոյ ճանաչել նրա լիազօրութիւնը օրինաւոր գտնելով։ Գալով Ենգիբարեանին յայտնեց, որ նա բողոքում է կատարուած ընտրութիւնների թէ օրինական և թէ բարոյական կողմերի մասին և պատրաստ է իր բողոքի հիմունքը յայտնել ժողովին, եթէ սա թոյլ կտայ։

Առ այս ընդհանուր ժողովը գտաւ, որ իր իրաւունքից վեր է քննութեան առնել կատարուած ընտրութեան բարոյական կող-

մերը, այլ միայն խնդրում է զեկուցանել իւրաքանչիւր մի պատգամաւորի ընտրութեան մէջ իր նկատած օրինական թերութիւնների մասին։

Այս առթիւ Ենգիբարեանցը յայտնեց, որ իրեն է վերապահում իրաւունք առանձնապէս բողոքելու, իսկ յիշատակուած պատգամաւորների լիազօրութեան մասին չբերելով ոչ մի առանձին պատճառաբանութիւններ, ընդհանուր ժողովը վճռեց ճանաչել և նրանց, այն է՝ Եղիշէ վարդապետ Շահումեանցի, Բարգէն վարդապետ Աղաւելեանցի, Գէորգ Ամիրեանցի և Գէորգ Մկրտչեանցի լիազօրութիւններն օրինաւոր, որով և պ. Ատենապետը ժողովը յայտարարեց փակուած։

Պատուաւոր նախագահ դիւանի՝ Յակովբ եպիսկ. Աշոտ
Ատենապետ՝ Սամսոն Յարութիւնեան
Փոխ ատենապետ՝ Նշան Անտոնեան
Քարտուղարներ՝ Մեսրոպ աւ. քնյ. Մելեան
Հայկ Անտոնեան.

Բողոքներ, պատգամաւորների լիազօրութեան հաստատութիւն եւ օրակարգերի կատարումն.

Պ. պ. Գարեգին Ենգիբարեանը և Գ. Զուբարը հասցրին իրանց բողոքները Սինոդին առաջինը վերև յիշուած արձանագրութեան հետ, դեկտեմբերի 11-ին, ժամը 9½-ին իսկ երկրորդը՝ մի օր յետոյ։

Սինոդը դեկտեմբերի 11-ին ժամը 10-ին լսելով պատգամաւորների լիազօրութիւնները ստուգող յանձնաժողովի արձանագրութիւնը և պ. Գ. Ենգիբարեանի բողոքը, № 811 օրագրով որոշեց հաստատել պատգամաւորներին, իսկ պ. Գ. Ենգիբարեանի բողոքը թողնել առանց հետևանքի։

Այս գործողութիւնները կատարելուց յետոյ ժամը 11-ին պատգամաւորները ժողովուեցին Վեհարան և Տեղակալ Սրբազանի նախընթացութեամբ առաջնորդուեցին տաճար, ուր Տեղակալ Սրբազանը մատուցանելով ս. պատարագ, կայսերական տան բարօրութեան համար մաղթանք կատարելուց յետոյ երդմնեցրեց աշխարհական պատգամաւորներին։

Դեկտեմբերի 12-ին առաւօտեան 9 ժամին Սինոդը նախապէս լսեց պ. Գ. Զուբարի բողոքը և մակագրութեամբ նոյն բողոքի վերայ թողեց առանց հետևանքի, և այնուհետև սկսեց ընտրական օրակարգի կատարումն։

Օրակարգի կատարումն.

ա. Դեկտմ. 10-ին, շաբաթ օրը օրակարգին համեմատ հանդիսաւոր սուրբ պատարագից յետոյ, որ մատոյց Կարնի առաջնորդ Տ. Սմբատ եպիսկոպոս, հոգևոր ու աշխարհական պատգամաւորների և բազմաթիւ աղօթաւորների ներկայութեամբ կատարուեց տարելցի պաշտօն ի Տէր հանգ. Տ. Մատթէոս Բ. Սրբազնագոյն Կաթուղիկոսի գերեզմանի վերայ. և զգացուած դամբանական խօսեց Սեբաստիայի առաջնորդ Տ. Թորգոմ եպիսկոպոսը։

բ. Դեկտմ. 11-ին ժամը 9-ին կիւրակէ օրը, օրակարգի համեմատ, բոլոր հոգևոր և աշխարհական պատգամաւորները, բարձր. կառավարութեան ներկայացուցիչ գրաֆ Տիզէնհաուզէն, Սինոդի պրոկուրորը և Սինոդի ատենադպիրը իւր օգնականներով խմբուեցին վեհարան և այնտեղից Կաթուղիկոսական Տեղակալ Տ. Գէորգ արքեպիսկոպոսի առաջնորդութեամբ առաջնորդուեցին Տաճար, ուր սկսուեց հանդիսաւոր սուրբ պատարագը, որ մատոյց Տ. Տեղակալը։ Ս. պատարագից յետոյ Նորին Ամենապատուութիւնը կատարեց մաղթանք թագաւոր կայսեր արևշատութեան և Կայսերական ընտանիքի բարօրութեան համար, այնուհետև ս. Իշման սեղանի առաջ երդմնեցրեց աշխարհական պատգամաւորներին, որոնք և ստորագրեցին երդմնագիրը, որ ունի հետևեալ ձևը.

ԹՈՒՂԹ ԵՐԴՄԱՆ

Ես, ի ներբոյ անուանեալ աշխարհական պատգամաւոր Կաթուղիկոսական ընտրութեան, խոստանամ և երդնում յԱմենակարող Աստուած առաջի սրբոյ Աւետարանի Նորա առ այն՝ թէ ցանկամ և պարտիմ յայսմ առաջիկայ ընտրութեան Ծայրագոյն Պատրիարքի և Կաթուղիկոսի ամենայն Հայոց վասն բարձրագոյն կառավարութեան սրբոյ Եկեղեցւոյ Հայաստանեայց և տեսչութեան եկեղեցականաց Նորին ըստ մաքուր խղճի մտաց և պարտուց իմոց առանց իրիք աչառութեան և անձնական ակնկալութեանց, ի բաց հերքելով յինէն զամենայն մախանս թշնամութեան և ոխամ զորպիսի և իցէ շաղկապս մերձաւորութեան և բարեկամութեան, ընտրել ի միջոյ հոգևորականաց հայրենի եկեղեց-

ւոյն իմոյ զայնպիսի անձն, զոր ըստ յատկութեանց հանճարոյ և խղճի մտացն առաւել ընդունակագոյն և արժանաւորագոյն համարիմ ես, և յորմէ ակն ունիմ, զի ի կատարումն պարտաւորութեանց իւրոց՝ զորս դնէ ի վերայ նորա վեհ աստիճանն այս հոգևոր, հանդիսացուցցէ նա զինքն ջերմեռանդն պաշտօնեայ Աստուծոյ հոգունակ տնօրէն բարօրութեան և օգտի Եկեղեցւոյն Քրիստոսի և նմա հաւատացեալ Հայրապետական իշխանութեանն ի վերայ բանուոր հօտին Քրիստոսի։ Իսկ եթէ այլազգ վարեցայց, յայնժամ իբրև անհոգ զօգտէ Եկեղեցւոյ և ճշմարիտ որդւոց նորին, յորում է սեպհական օգուտն իմ, արկանեմ զանձն իմ ընդ մեղադրանօք եղբայրակացաց իմոց և ի հանդերձելումն պատասխանատուութեան առաջի Աստուծոյ և ահեղ դատաստանի Նորա։ Ի վախճան երդման իմոյ վասն անաչառ ընտրութեան համբուրեմ զԲան և զՄաչ Քրիստի մերոյ. ամէն։

գ. Դեկտ. 12-ին բշ. օրը ժամը 11-ին օրակարգի համեմատ բոլոր պատգամաւորները և ի պաշտօնէ յատկացեալ անձինք ժողովուեցին վեհարան և այնտեղից Տ. Տեղակալի առաջնութեամբ առաջնորդուեցին Տաճար, ուր դրուած էին սեղաններ և աթոռներ. բոլորը, թէ պատգամաւորներն և թէ պաշտօնական անձինք բռնեցին իրենց տեղերը։

Սահմանուած սաղմոսից, աղօթքներից յետոյ Համազգային ժողովի նախագահ և Կաթուղիկոսական Տեղակալ Տ. Գէորգ արքեպիսկոպոսը բաց արեց ժողովը պատշաճ ատենաբանութեամբ։ Սինոդի պ. պրոկուրորը կարդաց ժողովի բացումն արտօնող Տ. փոխարքայի թուղթը (տես վերև եր. 21) իսկ Սինոդի ատենադպիրը՝ նրա թարգմանութիւնը։

Այդ ժամանակ առաջ անցաւ Ս. Էջմիածնի միաբանութեան ներկայացուցիչներից Տ. Սուքիաս արքեպիսկոպոսը և յայտնելով 28 պատգամաւորների գրաւոր բողոքի խմաստը, բողոքը ներկայացրեց Համազգային ժողովի նախագահողին ու իւր համախոհների հետ դուրս եկաւ Տաճարից,

Ժողովից դուրս գնացողներն են.

1, Սուքիաս արքեպիսկոպոս միաբ. Էջմ
2, Անանիա արքեպիսկոպոս առաջ. Շամախւոյ
3, Յովհաննէս արքեպիսկոպոս միաբ. Էջմ.
4, Դաւոնդ եպիսկոպոս միաբ. Էջմ.
5, Կարապետ եպիսկոպոս առաջ. Ատրպատականի
6, Բարգէն եպիսկոպոս առաջ. Գաղատիայի
7, Տիրայր վարդ. Նեբկ. առաջ. Բեսարաբիոյ և Բազդատի
8, Յուսիկ վարդ. անդամ Սինոդի և Նեբկ. առաջ. Բրուսայի
9, Բենիկ վարդ. Արզնիի առաջ, հոգև. Նեբկայացուցիչ
10, Տիրայր ծ, վարդ. Մարգարեան, պատգ. Բաբերդի
11, Մուշէ վարդ, առաջ. Նեբկ. Բալուի
12, Գարեգին վարդ. Յովսէփեան առաջ. Նեբկ. Տիգրանակերտի
13, Հրանդ վարդ. Յովասափեան, առաջ. փոխ. Դերջանի
14, Եղիշէ աւագ քհնյ. Գեղամեանց առաջ. Նեբկ. Զնքուշի
15, Նեբսէս քհնյ. Քաջբերունի, առաջ. տեղապահ Բայազէդի
16, Յովհաննէս Սպէնդիարեան պատգ. Վրաստանի և Իմերէթի Հայոց թեմի
17, Սամսոն Զէրբէգեան, պատգ. Ղարաբաղի Հայոց թեմի
18, բժ. Թադէոս Զաքարեան, պատգ. Շամախւոյ թեմի
19, Գէորգ Զուբար, պատգ. Նոր-Նախիջեւանի և Բեսարաբիոյ Հայոց թեմի
20, Արշակ Բաբեան, պատգ. Սեբաստիոյ Հայոց թեմի
21, Համբարձում Առաքելեան, պատգ. Լիմ և Կաուց անապատների
22, Տիգրան Գայումճեան, պատգ. Բազդատի
23, Խաչատուր Աֆրիկեանց, պատգ. Բայազէդի
24, Աղէքսանդր Քալանթար, պատգ. Տիգրանակերտի
25, բժ. Արտաշէս Շեխեան, պատգ. Բալուի և Արզնիի վիճակների
26, Գարեգին Ենգիբարեան, պատգ. Զնքուշի
27, Յովհաննէս Յովհաննիսեան, պատգ. Բրուսայի
28, Գէորգ Աբուլեան, պատգ. Դերջանի.

Համազգային ժողովին պէտք է մասնակցէին

Հոգևորական	71	128 անձինք.
Աշխարհական	57	

Պակաս էին հոգևորականների 71 թուից

Սինոդի անդամ . . .	1	
Շապին-Գարահիսարից . .	1	
Չէր մասնակցել Սսի թեմը . .	1	20
Ժողովից դուրս գնացին 15 հոգի ունենալով	17	

Մնացին ժողովում 43 հոգի 51 ձայնով

Պակաս էին աշխարհականների 57 թուից

Չէր եկել Աստրախանից . .	1	
Չէր եկել Խարբերդից . .	1	19
Չէր ընտրուած Նիկոմիդիայից .	1	
Չէ մասնակցել Սսի թեմը . .	1	
Ժողովից դուրս եկան 13 հոգի ունենալով ձայն . . .	15	

Մնացին ժողովում 37 հոգի 38 ձայնով

Ընդամենը 89 ձայն.

Մի բողոք ևս ներկայացրեց միաբանութեան ներկայացուցիչներից Տ. Բարդուղիմէոս եպիսկոպոսը, առանց ժողովից հեռանալու։

Այնուհետև ժողովը շարունակուեց ամենայն կանոնաւորութեամբ, ժողովին մասնակցում էին 80 հոգի 89 ձայնով։ Բաց ձայնատուութեամբ, ընտրուեցին չորս աւագագոյն թեկնածուներ.

1. Գէորգ արքեպիս. Սուրէնեան 86 ձայնով ընդէմ 3-ի
2. Եղիշէ արքեպիս. Դուրեան 84 » » 4-ի
3. Մեսրոպ եպիս. Տ Մովսէսեան 78 » » 11-ի
4. Ստեփանոս արքեպ. Յովակիմեան 63 » » 23-ի

Նախագահը ի լուր ժողովի կարդաց ընտրութեան հետևանքը, և ժողովականներին ստորագրել տալով արձանագրութիւնը փակեց ժողովը ճաշից յետոյ ժամը 3-ին։

Դեկտեմբերի 13-ին, օրակարգի համամատ պատգամաւորներն ու պաշտօնարան անձինք սահմանուած կարգով վեհարանից առաջնորդուեցին Տաճար։ Սահմանուած սաղմոսից և աղօթքներից յետոյ իւրաքանչիւր ոք կալաւ

իւր տեղը և սկսուեց գաղտնի քուէարկութիւն չորս աւագագոյն թեկնածուներից երկուսը ընտրելու համար.

Քուէարկութեան արդիւնքն եղաւ

	ապիտ.	սև
ա. Գէորգ արքեպիս. Սուրէնեան	58	30
բ. Եղիշէ արքեպիս. Դուրեան	57	32
գ. Մեսրոպ եպս. Տէր Մովսէսեան	39	49
դ. Ստեփաննոս արքեպիս. Յովակիմեան	38	51

Քուէները հաշուելուց յետոյ որպէս քուէների առաւելութիւն ստացող

Տ. Գէորգ արքեպիսկոպոս Սուրէնեան և Տ. Եղիշէ արքեպիսկոպոս Դուրեան հրատարակուեցին առաջին ընտրելիներ Հայրապետական աթոռի համար, որ Համազգային ժողովը ընդունեց բուռն ոգևորութեամբ և ուրախական սրտագին բացականչութեամբ։ Կազմուեց հեռևեալ արձանագրութիւնը և ստորագրեցին բոլոր ժողովականները։

13 դեկտեմբերի 1911 ամի Ս. Էջմիածին.

Ամսիս 11-ին Ս. Էջմիածնի Մինոգի, տարւոյս փետրուարի 16-ին թ. 116 օրագրական որոշման և Կովկասի Տ. Փոխարքայի տարւոյս նոյեմբերի 18 թ. 24306 առաջադրութեան համաձայն սկսուեցան ամենայն Հայոց Կաթուղիկոսի թեկնածուների ընտրութեան համար գումարուած Համազգային ժողովի գործունքները ըստ այսմ։

Կիւրակի, ամսոյս 11-ին հոգևորական և աշխարհական պատգամաւորները առաւօտեան 10 ժամին ժողովուեցան Վեհարան, ուր նոցա ընդունեցին Տ. Տեղակալը և Մինոգի անդամները։

Տէր Տեղակալը հրաւիրեց ժողովականներին Մայր Տաճարը ունկնդիր լինելու ս. պատարագին, որ մատոյց ինքն Տ. Գէորգ արքեպիսկոպոսը։ Ս. պատարագից յետոյ կատարուեցաւ գոհացողական մաղթանք ՆՈՐԻՆ ԿԱՑՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ և համայն Օգոստափառ տան կենաց և բարօրութեան համար։ Մաղթանքից յետոյ Տ. Տեղա-

կալը երդուեցրեց բոլոր ներկայ գտնուած աշխարհական պատգամաւորներին, որի մասին սահմանուած կարգով կազմուեցաւ պատշաճաւոր արձանագրութիւն։

Յաջորդ օրը, դեկտեմբերի 12-ին առաւօտեան 11 ժամին բոլոր հոգևոր-ական և աշխարհական պատգամաւորները նախընթաց օրուան կարգով Վեհարանից իջան Մայր Տաճար։

Ամենապատիւ Տ. Տեղակալը սահմանուած կարգով բանալով ժողովը, ասենաբանեց ըստ պատշաճի, որից յետոյ Սինոդի պ. Պրոկուրորը կարդաց ի լուր ժողովականների Կովկասի Տ. Փոխարքայի վերոյգրեալ թ. 24306 առաջադրութիւնը ժողովի բացման մասին, որի հայերէն թարգմանութիւնը կարդաց ատենադպիրը։ Սորանից յետոյ Մայր Աթոռի միաբանութեան պատգամաւոր Տ. Սուքիաս արքեպիսկոպոսը, խօսք խնդրելով Սրբազան նախագահից, յայտնեց, թէ ժողովի անդամներից Պարսկաստանի, Տաճկաստանի և Ռուսաստանի միքանի թեմերի հոգևորական և աշխարհական պատգամաւորներ, ինչպէս նաև Մայր Աթոռի միաբանութեան և Սինոդի ներկայացուցիչներից մի քանիսը չկամենալով իրենց վրայ առնել այս ժողովի արդիւնքի համար պատասխանատուութիւն, հրաժարւում են ժողովին մասնակցելուց և ներկայացնում են իրենց պատճառաբանուած բողոքը, որ խնդրում են մտցնել ընտրական ժողովի օրագրի մէջ բառ առ բառ՝ նորան օրինական ընթացք տալու համար։ Այդ բողոքը, որ ստորագրել են 28 անդամ 32 ձայնով կարդացուեցաւ ի լուր ժողովականների։

Պ. Սամսոն Յարութիւնեան, որ նախագահն էր դեկտեմբեր 10-ին պատգամաւորների լիազօրութիւնները քննելու համար կարդած ժողովի, համաձայն Ներքին գործերի Նախարարութեան առաջադրութեան յանուն Սինոդի Պրոկուրորի, հոկտ. 7 թ. 9005 և Տ. Տեղակալի գրութեան յանուն Տ. Յակոբ եպիսկոպոսի հետ 10-ն դեկտ. թ. 2194. մի առարկութիւն արեց յիշեալ բողոքի անհիմն լինելու առթիւ, որ բողոքի հետ օրոշուեցաւ կցել

գործին։ Ժողովականները միաձայն հաստատեցին պ. Ցարութիւնեանի յայտարարութեան ճշմարտութիւնը։

Այնուհետև Մ. Աթոռի միաբանութեան պատգամաւոր Տ. Բարգուղիմէոս եպիսկոպոսը ներկայացրեց ժողովին մի գրաւոր յայտարարութիւն, որի պատճէնը տուեց պ. Պրոկուրորին, և խնդրեց կարդալ այն ի գիտութիւն ժողովականների, բայց ժողովը մերժեց լսել նորա յայտարարութիւնը։ Այդ յայտարարութիւնը ևս որոշուեցաւ կցել գործին։

Պատգամաւոր Տ. Բարգէն վարդապետը յայտնեց, թէ պէտք է պատճառաբանելով մերժել 28 հեռացած անդամների առարկութիւնները, պատգամաւորների լիազօրութիւնների մասին։ Բայց պ. Պրոկուրորը բացատրեց, թէ այդ լիազօրութիւնները քննուած և կանոնաւոր են ճանաչուած Սինոդի կողմից, որին այս խնդրում պատկանում է վախճանական որոշման իրաւունքը, ուստի և այս խնդիրը քննութեան առնելու կարիք չկայ և ընդդրը պէտք է միայն կցել գործին։

Որանից յետոյ ժողովը ձեռնարկեց չորս աւագ թեկնածուների ընտրութեան ամենայն Հայոց Մայրագոյն Պատրիարք Կաթուղիկոսի պաշտօնի համար։

Բաց քուէարկութեամբ, սահմանուած կարգով, ընտրուեցան.

Տ. Գէորգ արքեպիսկոպոս Սուրէնեան 84 ձայնով.
Տ. Եղիշէ արքեպիսկոպոս Դուրեան 78 »
Տ. Մեսրոպ եպիսկոպոս Տէր Մովսէսեան 78 »
Տ. Ստեփաննոս արքեպ. Յովակիմեան 63 »

Այս արդիւնքի մասին պատշաճաւոր արձանագրութիւն կազմելուց յետոյ Տ. Տեղակալը փակեց նիստը և յայտնեց, որ ամսիս 13-ին տեղի կունենայ ժողովի յաջորդ գումարումը։

Հետևեալ օրը դեկտեմբերի 13-ին, ժամը 10-ին, սահմանուած կարգով տեղի ունեցաւ ժողովի յաջորդ գումարումը։ Ժողովին մասնակցում էին 80 անդամ 89 ձայնով։

Տէր Նախագահը բանալով ժողովը, առաջարկեց, ա-

անենագլխին կարդալ նախընթաց գումարումների արձանագրութիւնը, որ ընդունուեց մի քանի փոփոխութիւններով։ Ապա քուէարկութեան դրուեց չորս թեկնածուներից աւագագոյն Տ. Գէորգ աքեպիսկոպոսը—որի քուէարկութեան ժամանակ նախագահում էր Տ. Յակոբ եպիսկոպոսը. Տ. Գէորգ արքեպիսկոպոսը ստացաւ գաղտնի քուէարկութեամբ յիսուն ութ ընտրողական և երեսուն ոչ ընտրողական քուէ։ Յետոյ քուէարկուեց Տ. Գէորգ արքեպիսկոպոսի նախագահութեամբ հեռակայ թեկնածու Տ. Եղիշէ աքեպիսկոպոսը, որ ստացաւ յիսուն և եօթն ընտրողական և երեսուն և երկու ոչ ընտրողական քուէ։—Տ. Եղիշէ արքեպիսկոպոսի քուէատուփի ընտրողական արկղից դուրս եկաւ հայերէն գրուած մի փոքր տոմսակ «աշխարհական պատգամաւորներ» ստորագրութեամբ ուղղուած պ. Պրոկուրորին։ Ժողովը չկամեցաւ կարդալ այդ տոմսակը, որ յանձնուեցաւ իրեն պ. Պրոկուրորին։

Երրորդ թեկնածու Տ. Մեսրոպ եպիսկոպոսը ստացաւ երեսուն և ինն ընտրողական և քառասուն և ինն ոչ ընտրողական քուէ. իսկ չորրորդ թեկնածու Տ. Ստեփաննոս արքեպիսկոպոսը ստացաւ երեսուն և ութ ընտրողական և յիսուն և մի ոչ ընտրողական քուէ։

Ընտրութեան այդ արդիւնքը պաշտօնապէս յայտարարուեց ի լուր ժողովականների և յայտնուեց, որ ըստ այդմ ամենայն Հայոց Պատրիարք—Կաթուղիկոսի աստիճանի համար ձայների մեծամասնութեամբ թեկնածուներ են ընտրուած Տ. Գէորգ արքեպիսկոպոսը և Տ. Եղիշէ աքեպիսկոպոսը։ Այդ մասին կազմուեց պատշաճ արձանագրութիւն հայերէն և ռուսերէն, որ և ստորագրուեց բոլոր ժողովականների կողմից։

Ժողովը իւր զբաղմունքները աւարտելուց յետոյ միաձայն որոշմամբ հեռագրով դիմեց Կովկասի Տ. Փոխարքային, խնդրելով արկանել առ ոտս ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ Ռուսահպատակ հոգևորական և աշխարհական պատգամաւորների ամենահպատակ հաւատարմութեան և օտար երկրներից եկած բոլոր պատգամաւորների ան-

հուն երախտագիտութեան զգացմունքները, որպէս Օգոստափառ Հովանաւորի Հայաստանեայց եկեղեցու։

Շնորհակալութեան հեռագիր ուղարկուեցաւ ժողովի կողմից միաձայն որոշմամբ նաև Կովկասի Տ. Փոխարքային իւր բարեացակամութեան համար դէպի Հայաստանեայց եկեղեցին և հայ ժողովուրդը։

Շնորհակալութիւն յայտնուեց Բարձրագոյն Իշխանութեան ներկայացուցիչ Կոմս-Տիզենհաուզենին. նախագահ Տ. Գէորգ արքեպիսկոպոսին և Պրօկուրոր պ. Մելիք Օհանջանեանին իրանց աշխատանաց և ժողովի զբաղմունքները օրինակելի կարգով առաջ տանելու համար։

Սահմանեցին. Տ. Գէորգ արքեպիսկոպոս Սուքէնեանցին և Տ. Եղիշէ արքեպիսկոպոս Դուրեանին ճանաչել ամենայն Հայոց Կաթուղիկոսական թեկնածուներ և յանձնարարել Տ. Եփրեմ եպիսկոպոս, պ. Սամսոն Յարութիւնեան և պ. Յակոբ Միքայէլեան պատգամաւորներին, անձամբ զեկուցանել Կովկասի Տ. Փոխարքային ընտրութեան արդիւնքը և ներկայացնել նոցին Գայծառափայլութեան ընտրական կարևոր թղթերն ի պատշաճ տնօրէնութիւն, համաձայն XI հատ. | մասի 1125 յօդ. հրատ. 1896 և Կովկ. կառավարութեան կանոն 21 յօդ. (II հատ. ըստ շարուն. 1906 ամի)։

(Ստորագրութիւններ)։

Այնուհետև Տ. Փոխարքայն, անունով խմբագրուեցին երկու հեռագրեր. առաջինով ժողովը խնդրում էր Տ. Փոխարքային Համազգային ժողովի հաւատարիմ հպատակութեան և երախտագիտութեան զգացումների արտայայտիչը լինել առ Թագաւոր Կայսրն որպէս առ Վեհագոյն հովանաւորն հայ եկեղեցու և ազգի։ Երկրորդով ժողովը խորին շնորհակալութիւն և երախտագիտութիւն էր յայտնում Տ. Փոխարքային որպէս հայ եկեղեցու և ազգի բարեացակամի։

Ժողովը շնորհակալութիւն յայտնեց ժողովի նախագահ Տ. Գէորգ արքեպիսկոպոսին, բարձր կառավարութեան

ներկայացուցիչ, Երևանի նահանգապետ և Բարձրագոյն Դրան հոֆմէյստար գրաֆ. Վ. Ֆ. Տիզէնհաուզէնին, և Սինոդի պրոկուրոր Գ. Փ. Կ. Օհանջանեանցին, որոնց շնորհիւ ժողովները շարունակուեցին ամենայն կանոնաւորութեամբ։

Նախագահ Տ. Գէորգ արքեպիսկոպոսը Համազգային ժողովը փակեց ժամը 3½-ին. պատգամիչով։ Հնչեցին զանգակները և հոգևորականութիւնը ս. Իջման Սեղանի առաջ Թագաւորի կենդանութեան, Հայրապետական գաւազանի պայծառութեան և Հայաստանեաց եկեղեցու պէտքը լցնելու համար երգեց օրհներգ—«Թագաւոր փառաց» շարականը։

Ժողովի նախագահ և առաջին ընտրեալ Տ. Գէորգ արքեպիսկոպոսի առաջնութեամբ ժողովականները դուրս եկան Տաճարից։ Անգին բազմութիւն էր խռնուել Տաճարի շուրջը. և բոլորը մտովին, իւրաքանչիւրը իւր հասկացողութեամբ, աղօթում էր առ Աստուած և ասում.

«Միշտ անշանթ պահեա զթագս Հայկազնեա»։

Թուրքիոյ Հայոց պատրիարք Աւետ. Տ. Յովհաննէս Արքեպիսկոպոսը ուղղել է հետեւեալ հեռագիրը առ Տ. Գէորգ արքեպիսկոպոս

"Կը շնորհաւորեմ ի դիմաց ազգին զՀեր Սրբութիւն եւ յաջողութիւն կը մաղթեմ ի բոլոր գլուխ"։

Ստացուել են շնորհաւորութեան և այլ բազմաթիւ հեռագրեր. Ռուսաստանի և արտասահմանի զանազան հասարակութիւններից ու անձերից։